Մահկանացուաց սրփռեալ կան ազգք աւասիկ
Երկրպագուք մեծի անուանն այնորիկ:

Հագարացին վէս ահա սուր 'ի ձեռին
Զանուանն ընդդէմ ածէ զիւրոյ ըզպետին.
Ինձ 'ի սկըզբան անդ մարտակիցք երկոքին
Բերել զերկրէ վէճ ընդ իրեարս թըւին.
Այլ անուանին յերկրէ իւրմէ փախըստեայ,
Զուր ըզբոլոր իսկ զարևելս Ջանայ
Գերի վարել ընդ անհեթեթ օրինաք...
Գիրք զոր, վիպացըն թէ լըսել կամի ոք:
Մարդարէին այնմիկ ազգեաց աղաւնին,
Երկրորդ ըզնա վկայէ Թարգման երկնային,
Եւ ըզԲրիստոս եկեալ հրեշտակ վաղագոյն,
Առ 'ի կանգնել ըզմարդ զանկեալն 'ի պատուոյն:
Այո, զանուանըն զայն ոսոխն այնորիկ,
Զոր քրիստոնեայք պաշտեն, պատուէ աւանիկ.
Առ քեզ ապա, ո՛ քրիստոնեայդ, գիմեմ ես.
Զի դու միայն ինձ հիացումըն գործես:
Լի է երկիր համայն քոյոցդ 'ի կրօնից.
Ի՞նչ թէ դու իցես, ապա աղէ ինձ,
Երկնաւորացն աւանդապահ պատգամաց.
Եւ զինչ կրօնից է քոց կընիք գերապանձ:
Թէ հաւատեաց նորին իցես 'ի խընդիր,
Պատասխանէ նա ինձ, աղէ դու մատիր
Ի վաղեմի նորին 'ի սկիզբն անդր 'ի վեր.
Եթէ մարդկան ինչ գիւտ պարծանք նորին էր,
Քեզ վէպք ըզծնունդ նորին և զսիս պատմէին.
Այլ համատի տիեզերացս է բնաւին,
Եւ ծնաւ յաւուր յորում աւուրք իսկ ծընան:
Ի յոչընչէ այն ինչ մարդ եկն յերևան,

Վաղ իսկ ամբիծ հոսէր արիւնքն գառին,
Որում երկիր արդ պագանեմ ես ինքնին.
Եւ նախահարցն իմոց մատեանք նախագիրք,
Նոյնք և ազգի մարդկան պահեալ տարեգիրք.
Ինձ 'ի ձեռաց ժողովրդեանն առաջնոյ
Աւանդեցան 'ի ձեռս աւանդք գերարգոյ։
Յորժամ զպատգամս իւրեանց երկինք հաճեցան
Տալ մահացուացս 'ի պահ յանեղծ 'ի մատեան,
Մովսէս Թոռանցն Իսրայելի, զորս յայնժամ
Սիրէր Աստուած 'ի հոյլս ազգաց յոգնեբամ,
Եւ քան ըզբնաւ գանձ ըզյաւէտ ցանկալին։
Վէպք, զոր պատմէ նա, է նոցայն գրքովին.
Եւ պատմելոց 'ի նմա անցիցն այնոցիկ
Զն յիշատակք էին յայնժամ վաղեմիք,
Եւ ոչ պատմիչն անգ քօզարկէ լքռութեամբ
Զի ազգն այն հեստ էր ապաշնորհ ապրստամբ.
Սակայն որդի առ 'ի հօրէ ժառանգէր
Զայն իբր անգին ինչ գրաւական ըզստիպեր։
Սուրբ և բառիցն անգամ 'ի գիրս անգ է թիւ,
Որում նոքա ընծայեցին միշտ պատիւ.
Թիթեան զի մի գուցէ ժրպիրհ ձեռն և ժանտ
Յանդգնեսցի ինչ ոյլայլել յօրէնս անգ,
Որ ըզնոսին առնէ յաւերժ գոտապարտ,
Եւ որ ըզխիստ և զձիգ պատժոյ նոցին ցարդ
Յայտ ոսոխաց նոցին առնէ ըզպատճառ,
Եւ ըզխորին մեզ ըզխորհուրդն և զանձառ,
Ի խոթամիտքն, աւա՜ղ, կռապաշտ մեր նախնիք
Ճեռք Ադամայ ևեթ գոլով և որդիք,

Նախամեծար քան զընտրականն եղեւն ազգ,
Լեալ քան զորդիան Աբրահամու նախագոյք։
Հալածականք յերեսաց տեառն աւանիկ,
Բարձեալ զեբրեանցն բերելով գտատակիք.
Արդարութեան նորա քարոզք ընդ աշխարհ
Հրատարակեն նոքա զայն բարձր 'ի բարբառ.
Զիք թագաւոր նոցին և ոչ իսկ քաղաք,
Սեղանք նոցա և տաճար հին 'ի յատակ.
Եւ նախատինք ազգաց նըժգեհ տարագիր
Գրնան գերիք թափառականք ընդ երկիր։
Ընդէր իցէ արդ զայնքանեսացն ըզվանէր
Պատուհասիցն 'ի նոցանէ հարցանել.
Ե՛րթ ըզմատեանն 'ի ձեռանէ նոցին կա՛լ,
Եւ ընդ նոցունցն 'ի նմա ընդ վէպս հետեւեալ,
Որ ինչ եղեն ընթեռնուցուս անգ կարգաւ,
Որ ինչ են արդ, որ ինչ լիցին իսկ տակաւ։
Այլ ես ըզկայ առնում, տեսիլ նորաստանչ
Ի հիացումն ինձ եւանէ ընդ առաջ,
Քանիցըս զազգն զայն ածեմ ես 'ի յուշ,
Զըստանչելիսն քան թէ զազգ, ապշիմ յոյժ.
Ի յարենէ ծընեալ որդիք Յակոբայ,
Այն որ հաւուցն հայր նախնեացն էր նոցա,
Ի յարենէ՝ որ յետ այսքան շրջանաց
Խառնել երբէք յարիւն օտար ոչ կարաց,
Յրրուեալք 'ի սփիւռս՝ այլ միացեալք ընդ իրեարս
Արքդ այդոքիկ ոչ ինչ նըւազ քան զեղբարս.
Միում հնազանդք օրէնըսդրի համակրօն,
Նըմին հաստչի մատուցանեն միշտ պաշտօն.

Սակայն հիքացն հոյլք այնքանեաց ցան և ցիր
Մի կազմեն ազգ թափառական ընդ երկիր։
Ասորեստան և Հռովմ, և դու Կարքեդոն,
Գարթեք և Մարք ո՞ւր իսկ դուք արդ իցէք ՝ն.
Ոչ ևս արդ հեռք ձեր ՝ի միջի երևին.
Եւ քո իսկ ո՞ւր են փառք, ո՛ խրոխտ Սարակին.
Անուն քոյին պահի ՝ի վէպս միայն.
Աշխարհաւերքն ազգեք ընդ դարբս կորեան.
Եւ ստէպ բնակիչք երկրի սահեալ փոխեցան,
Ուր մի այն ազգ՝ զոր առեան ազգ ամենայն,
Յարակայեալ, և անկորուստ մինչ ՝ի սպառ
Զաւաղելին իւր ցուցանէ մեզ նշխար։
Զինչ անողորմքդ ազէ իցեն ձեռընհաս,
Ասեն, առնել մեզ թշնամանք ձեր վընաս.
Եթէ Աստուածն Աբրահամու վճռեաց զայն,
Կալ մեզ յաւէրժ և մնալ մինչև յաւիտեան։
Ոչ ոչ, որ էնն աստուած անտուտ ՝ի խոստմունս
Երդուաւ, և ոչ ցրեսցէ երբէք զիւր երդմունս.
Զուխտն, զոր եդ նա և ուխտեաց հրաչակաւ
Ընդ անդրանիկն իւր Իսրայէլ, չեղծ բընաւ.
Բարեբասեալց որդւոց նորին ՝ի վերայ
Մատեսցէ աստղն խոստացեալ անեղկբայ,
Եւ յարենէն սերեալ զաւակ Յակոբայ,
Կալով կացցէ մեզ առաջնորդ և արքայ։
Թէպէտ թշուի պատուհասեալ ըզմեզ տէր,
Թէպէտ և խոր ՝ի մոռացօնս արկանել,
Այլ մեք յաւէրժ խոստացեալումն ՝ի յերկնէ
Ակընկալեալ՝ զի որ գալոցն է գայցէ,

Հաւատարիմք յերկարատև յայս յաղէտ,
Ընդամք ում հարքքն մեր մնային անձկաւէտ։
Անց ժամանակն, այո՝ պարտէր իսկ արդեաք
Աւետաւորն այն օր ծագել ցարդ ըզմեզ
Այլ մի քընիչք, ՝ն անդր, ըմբոստք և ժըպիրհք
Անկցուք աւուրցն այնոցիկ յայց ՝ի խընդիր,
Զոր տեսանողքն մեզ կանխաւ ծանուցին։
Նըզովք ՝ի գլուխ անիծապարտ մահացուին,
Որ զգուշակեալն յաճախ էարկ ՝ի համար
Ըզժամանակն զայն վաղուստ իսկ սահեալ։
Ոչ, ոչ զըզջայ բարձրեալն ընդ ուխտ իւր բընաւ.
Այլ զի նա զայս մեր յերկարել կամեցաւ,
Զիարդ ըստրուկն ՝ի դատ ընդ տեառն իւր մըտեալ,
Յանդգնեսցի երբէք խընդրել ըզհամար։
Սակայն ՝ի հեստ դուք ՝ի հաշիւդ յայդ յողայք
Ո՛ յանդգնութիւնք և ամպարիշտ քրիստոնեայք.
Դուք որ կարծէքդ, նախանձորդք ընդ դանձ մեր,
Ըզխոստացեալսն մեզ բարիս ժառանգել։
Բա՞ռք, թէ էր իսկ երևեալ Փըրկիչն իւր,
Ո՞չ ժողովուրդն առհասարակ մըտադիւր
Ընդ գրոշակաւ նորին գիմեալ յաղթական,
Մանուն արդեաք ընդ ազէտիցն փոխան
Խընդրեր վըրէժս ՝ի ձէնջ, և տայր դառնապէս
Ընդ բըռնութեամբ զենուցն իւրոց հեծել ձեզ։
Այսպէս խօսի Հըրեայն. ողո՞ր կուրութիւն,
Եւ պատուհաս ահեղ անհաս յանցուածոյն։
Թէ խոստացեալ նըմա արքայն ՝ի բարձանց
Ոչ եբս գայ, և ժամանակն իսկ էանց,

Ա՛ հ՞ինչ ապա սպասել գալոց նորա բնաւ.
Թող սպասեցին 'ի սպառ, պատգամն այն լըցաւ։
Որ 'ի նախնումն յաճախագոյնս եղեալն աղդ,
Ահա ձրգեալ կայ ըստ ոգի առագաստ.
Աստուած որ ինքն ևեթ գիտէ զապագայն,
Նա զդերապանծըն Թեւլաղբեաց ըզմատեան,
Ուղղեալ ըզդրիչ մատենագրացն իւրովի.
Եւ սուրբ մատեանն այն ըստուգիւ վըկայի,
Ակն յանդիման ըրմտոմբ յոգունցն այնքանեաց
Նախազգեցիկ որ 'ի նըմայն պատգամաց։
Զաստուածայինն ապա զպատգամն որ 'ի նոմա,
Թոստովանիմ այսուհետև աներ կրայ,
Եւ ըզկրօնիչ անդ խակ խընդրեմ ըզծագումն։
Այն ինչ բացեալ զայն, և ահա ընթեռնում
Զի արարիչն ամենակալ 'ի սկըզբան
Ի յոչէից 'ի գոյ էած զամենայն.
Նա զնախաստեղծն 'ի տիպ իւրոյ պատկերի
Հաստեալ ըզմարդ. փըչեաց 'ի նա ըզհոգի.
Եւ զհոյլս էից 'ի սպաս նորին կացուցեալ,
Եդ ըզնա ինքն ընդ տիեզերս ինքնակալ։
Այլ նա չկարաց առանց 'ի յողջն կալոյ
Բերել զայնքան յանձին պատիւ գերարգոյ.
Եւ բանաարկուին տեղի, կորոյս անժառանգ
Չերանութիւնքն զայն՝ որ էր նըմա անկ,
Եւ զոր յորդիս պարտ էր նըմա աւանդել.
Սակայն վըճիռն աստուածատատ զայն արգել։
Անեզրական պատուհասն գառատկնիք
Անյեղլի զբանս խաւարայնոյն այնորիկ

Գրաւեալ ունէր վաղ ընդ իւրև հրեշտակին.
Գրատաւ և մարդն մեղապարտ ընդ նըմին.
Բայց բարեբախտ ևբա սրմա վիճակ եղ.
Բնութիւն համայն զինեալ 'ի վրէժ ընդդէմ մեր,
Մեղապարտին հընչէր 'ի յունկըն մարդոյն
Հանդերձելոց շնորհաց բարբառ ինչ խակոյն.
Եւ ապառնալից գատակընքին խակ վըճիռ
Սփոփէր մեղմեալ ըզսատան 'ի զրոյց յուստգիր։
Անտի սկըսեալ դարուց 'ի դարս յառաջգէմ
Գայր փըրկութեան մերոյ գործ վեհ և վըսեմ.
Եւ խոստացեալն յայնժամ փըրկիչըն մարդկան
Ժողովէր յինքն անդըստին զաղգս ամենայն,
Որպէս շնորհեալ ապա նոյն ինքըն նոցին
Համախըմբէ 'ի յինքըն ցարդ ըզնոսին։
Ի գերահրաշն ապա յայտնի 'ի գիրս յայս
Եւ Պլատոնի և ինձ առակն այն անհաս
Մերժի խաւարն, և 'ի լոյս աչք իմ բանան,
Եւ զմահացու հարուածն 'ի միտ առնում զայն,
Իւ տիեզերք գրատան 'ի սպառ այլընդայլ։
Տեսանեմ անդր ընդ մեզ 'ի ներքըս մըտեալ
Ըզտապալումն վեր 'ի վայր ըզկարգաց.
Ոչ ևս անհաս գտանիմ ես ինձ արարած.
Փակի կընձիռն, հերքէ զգիշերըն նըշոյլ
Յաշխարհակալ ծագեալ 'ի վիհն յայն արքուր։
Այլ թէր անմեղ գտանի մանուկ ժառանգորդ...
Աւաղ, վարանքս այս 'ի խաւար թըլփայորդ
Շուրջ պաշարեն զիս, և գարձեալ առատանոր
Համապարփակ առ ինև վիհ բանի խոր.

Աստուած և մարդ և տիեզերք ամենայն
Լինին աչաց իմոց 'ի նմա յանգիման։
Գործն անթերի յիւրմէ հաստատեալ յարարչէն,
Խանգարեցաւ կորոյս ըզգեղն համօրէն.
Զայն իսկ 'ի միտ ապա առեալ ուսցուք արդ,
Թէ ո՞ւր ուրեմն զարտուղի անկաւ մարդ։
Տարագրելոյ տոհմին ծընօղ մեղապարտ
Զաստուածանէծն արար զերկիր բազմամարդ,
Լցեալ որդւոց իւրոց 'ի չուառ զայն 'ի հոյլ.
Առ 'ի զաւուրսն ցաւալիցս յաւելուլ,
Եկին նախնիքն 'ի լոյս արուեստքն այնոքիկ,
Թշուառութեանց մերոց երկունք և որդիք։
Ցերկայն 'ի շերտս բարունակ յանտառի
Բազկին տեղի տայ, և խրլեալ պատառի.
Ի յերկաթոյ ապա կոկեալ և տաշեալ,
Առնու 'ի ծայր իւր երկայնէ ըզտապար։
Ի զօրավիգն իւր մարդն առեալ զայն 'ի կիր,
Կըշռէ հարուածս հանդերձ ճըգամբք ծանրակիր,
Եւ արկանէ ըզյաղթ մայրին 'ի կործան,
Ուստի ամուսն առեալ սերէր ուղէշն այն։
Թեթև մատին ըզհետ գայ հլու և հնազանդ
Ասա գեղին 'ի յիլ, և ամառուս բազուկ անդ
Թօթափէ խիտ հարուածս 'ի տալն՝ որ հեծէ.
Խարտոց 'ի գոնէ ունկան զերկաթն կըրծէ։
Ի հոսանուտ կասեալ 'ի խոչ ռահանորդ,
Ցանձն 'ի կեղև առնէ ծառոյ զոտն երկչոտ.
Ընկըրկէ զնա երկիւղ, յառաջ մըղէ շահ.
Գնայ ընդ ալիս անցեալ ընդ գետ ահընդահ.

Այլ նա 'ի թեւս առագաստիցն վըստահ,
Դէտակն յատակեալ, հատցէ ըզ հուպ ըզ ծով ռահ։
Յարտաստր ըզհաց իւր չև թըրեալ, 'ի յերկան
Լեսու յերկար հեծեծանաց ըզցորեան.
Գետ 'ի յընթացս ապա և հողմ 'ի շունչ իւր
Ըզխոնջ բազկաց նորին խնայէ զվաստակ զուր.
Բայց գիւրատեսք աչաց նըպաստքն չըքնաղ
Զև ծանուցեալ, գտանի աշխարհ զառամ վաղ։
Ո՛վ մարդ, ո՛ հրէշ տըգիտութեան, թըր եկիր
Ի հպարտութիւնդ յայդ խոլ՝ ծընեալդ առ 'ի կիր։
Մինչ գեռ տակաւ պէսք ժամանակն և հընարք
Աձեն ըզհոյլս արուեստից յարդ և 'ի կարդ,
Խուժեալ ոճիրք ըզսիեզերս ողողն,
Երկնեալք 'ի վէս և 'ի յըմբոստ խրոխտմանէն։
Շկահէ երկաթ, և գնայ արիւն շուրջ 'ի սփիւռ.
Նախկին նախճիրքն, զոր սոսկմամբ արբ երկիր,
Եղբայրասպան սըրտմըտութիւն եհեղ զայն։
Հէգք 'ի խորոց անկեալք 'ի խորըս կործան,
Ի նորանոր միշտ 'ի յոճիրքս զերկին
Թըշնամանեալ ցայն վայր աշխատ արարին,
Զի թէպէտ յամր առ 'ի չարեաց պատուհաս,
Այլ խոնջ յայնքան թըշնամանացն և պարտաս,
Ցաշխարհաւերն ապա զնոքօք 'ի հարուած
Ըզմեծատատ վրէժխնդրութիւն իւր էած։
Ծածկեաց զերեսս երկրի հեղեղ յանկարծ ջուրց,
Սուզան յալիս, վախճան հասեալ կայր հանուրց.
Սակայն պահեալ անտի արդար ոք ազատ,
Ելից նորովք բնակչաց զաշխարհ անապատ.

Կորոյս երկիր, որ արգաւանդն էր ցայնժամ,
Ըզբարութիւն բերոյն իւրոց և ըզհամ։
Ի մրսեղեաց ապա օձան խընդրեցաւ
Ամփոփելոց կենացս 'ի յատրս սակաւ։
Ապերասան յանդգնութիւն քերթողաց
Որ յանհեթեթ ըզձրշմարիտն 'ի խառնուած
Ընդ առասպելս 'ի մի սովոր է յեռուլ,
Ցօդուածոյիցն նա յաշխարհ վկայց իւր
Ի հին ըզդէպս հաւատարիմս առ 'ի կիր.
Եւ 'ի յանցից անտի եղեալ 'ի խընդիր
Ըզբօսանաց դատարկախօսղ լրսելեաց,
Ըզհրաշակերտսն մեծամեծս յերիւրեաց։
Հրաչակաւորքն անտի յառաջ դարք եկին,
Զորոց ողբան գեռ ըզկորուստ գառնագին.
Հեզահամրոյրն արքայութիւն հոգեկան,
Ոսկեղինիկն դար, ամրիծ հասակն այն,
Ցորում չէին պէտք օրինաց և պատժոց,
Արդարութիւն հանդէր կրօնից գոհ 'ի ծոց,
Երանաւէտն այն դար ոսկի բարեբախտ,
Ցորում ոսկին գոյր անծանօթ և ապախտ։
Սակաւապէտ որեարն յայնժամ շատանայր
Ընդ գոյզն միրգս զոր երկիր նրմա տայր.
Օրհաս մահուն յայնժամ ընդ ամրս յամայր
Դանդաղաքայլ 'ի ձեմ առ նա մերձենայր։
Այլ խանջ ապա 'ի կապարեալ ըզկաղին,
Արկ նա զերկաթ 'ի յերկընչոտ կենդանին.
Երագաթեն հաւուն ընդ օդս հաս ըզհետ
Ի լայնալիճ աղեղանէ ընդոստ նետ։

Անկաւ անմեղ գառն 'ի զայրոյթ մահացուին.
Եւ 'ի նախճիրս սովորեալ սիրտ նորին,
Եղև երկաթ ընդ հուպ գործի մահուն իւր.
Եւ ընդ երկիր տիրեալ եղեան ընդ հանուր,
Վաղ ահաւորն այն 'ի վերայ նորին հաս
Համայնաջինջ ջրհեղեղին պատուհաս։
Վկայեն հանուրք մեզ ցարդ զարկածն ահագին,
Վէպք, առասպելք, և տխտարակ բնաբանին։
Երրայականն այսպէս մատեան 'ի բնաւից
Առնու ըստաս և մեծարանս 'ի վկայից.
Նա աւանիկ և առասպելք իսկ գոգցես
Հնարեալ ըզվէպս հաւատարիմ առնել մեզ,
Բերին ըզտիպ նորին յինքեանս 'ի ծնընդեան։
Այլ 'ի ստերիւր թողեալ զնոսին յոր անկան,
Ի յաղբերակն գէմ եղեալ ընթացուք,
Ճշմարտութեանն ձիգ ըզհետ խուզարկուք։
Արտակիտեալ երկիր 'ի ջրոյ, և գարձեալ
Տեսանէ շուրջ զիւրև 'ի վեր երևեալ
Ըզբերս և զաղգ մարդկան և զհոյլս արուեստից.
Վերածնանին ազէտք ընդ մեղս մեր կից։
Ընդ խարխուլ տամբք պատրսպարին 'ի սկզբան,
Խընդրէ ամուր ապա երկիւղ ապաստան.
Պեղին հիմունք, բարձր 'ի պատուարս ամրարտակ
Կանգնի անմահ մահկանացուաց յիշատակ,
Անդր ինչանէ յերկնից բարձրեալն 'ի զընին,
Եւ խառնակէ անդ ըզբարբառս նոցին.
Այր ընկերին յայնժամ խօսիցն անիմաց,
Այլ ոք այլուր ցերուեալ մեկնին յիրերաց.

Գալով գայցեն միմեանց դարձեալ 'ի խընդիր,
Այլ առ 'ի մահ միմեանց յարիւն 'ի նախճիր:
Ընդդէմ դրացւոյ նեղչի երգնուն աւերած,
Դիմեն զամուրքս կործանեն քաղաքաց.
Ցափըշտակեն կուտեն աւար և կապուտ,
Եւ սրախողխող անկեալ գընի գիակոյտ:
Ո՛ անիրաւ և անողորմ մահացուդ,
Ընդ որ հատիչն 'ի զեղջ ածեալ ու 'ի զայրոյթ,
Ի չէք ըզքեզ դարձուցանել խորհէր վաղ,
Կարձեալ հիքիդ յառաջընմէ ըզկենցաղ.
Հիմ մահաբեր փայլէ երկաթդ 'ի ձեռին.
Մինթէ կարի՞ ինչ կեանս եթող քեզ երկին:
Այլ ո՞ զնոցին սանձել զցասումն մարդի.
Զինչ իսկ կըրթէ զնոսա յարուցեսա մեծ մարտի.
Իշխանք երկրի և հաւասարք 'ի պատիւ,
Ոչ ինչ 'ի նմա կաւեալ, ունին զայն ըրիւ:
Այլ իմ անկիւնս այս, իմ է գաշտ. և զայս քեզ
Պարտ է ըրանի թափել վրտակ 'ի բազկէս.
Որ ընդ սահմանս քո գործէր ցարդ հոսանս,
Թո՛ղ արդ 'ի յիմսըս գործեսցէ 'ի սահմանս:
Ոմն 'ի սատցուած ծառոյ իրիք դրրդէ կագ,
Ցափըշտակէ այլ ոք մարտիւ զանտառակ.
Եւ որ յաղթէն՝ աշխարհակալ կամ արքայ,
Որեարն անուն մեծարանաց նըմին տայ:
Ոմն 'ի գաւառ իւր լայնատարը յաւելու
Զայս ինչ գրաւեալ գետ և կամ զայն ինչ առու,
Եւ ընդ հուպ լեռան այն նըւաճեալ 'ի նմանէ
Ըզպետութեան նորին սահման հատանէ:

Թաղայ գընայ տայ Աղէքսանդր ասպատակ.
Ոչ ևս է նա աւարառու աւազակ,
Այլ մեծազօր պետութեան հայր բարեբաստ,
Զոր պետութեան նորածնելոյ խառվէ սաստ:
Գաւառք աղինք և պետութիւնք իսկ համայն
Փոխանակաւ առնուն ըսկիպտրն և վախճան.
Զինչ այլ երկիր աղէ զիւրեաւ տեսանէ,
Բայց ինքնակալս՝ որոց ըզսիրմ 'ի նմանէ
Գրաւեալ յիւրեանսն բաժանեն, Հոկք 'ի նմա
Հարըստութիւնք առեալ ըզհին և ըզկայ:
Անդ արքայից վեհից կազմին արքունիք,
Թագ, գաւազան, գահոյք և ձորձք ծիրանիք:
Այլ այնինչ սուր հպատէ զնոցին պետութիւնս,
Առնեն երկնիցն պետութեան մոռացունս.
Եւ արարչին լեալ յիշատակ տարագիր,
Մարդն հետազօտ նըմին 'ի խոյզ 'ի խընդիր,
Կարծէ գտանել ըզնա 'ի բնաւս 'ի նոսին,
Որ ինչ չըքնաղ նըմա յեիցըս թըւին:
Ցարփուոյն՝ որ գարձ առնէ առ ինքն հանապազ,
Զոյգ ընդ լուսոյ սպասէ զբախտին իւր օրհաս.
Ցանշունչ աստեղց՝ որ թաւալին ըզնոքաք,
Խընդրեն աղինք ըզյաղթութիւն արհաւրաք,
Շնորհակալութք բարեաց առնուն 'ի պաշտօն
Ըզբարերար ձեռնարուեստից ըզգործօն:
Անկեալ Եգիպտ առ Ոսիրիս պաղատի.
Թէպէտ աձիւն նորա փակեալ 'ի շիրմի,
Սակայն անհարթ և անարուեստ տաշեալ վէմ
Ցինքն ըզնորին ինքեան բարձեալ բերէ զդէմ.

Կոձղ ահա փուռ գրոցաւ ատուած եղանի։
Եւ Անոբեայն պատկեր ծաղու արժանի,
Կաղկանձողին այնորիկ տիպ ատուածոյն,
Զըգէ 'ի ապաս իւր զիմաստուն ազգն ողջոյն։
Զինչ առ բազնաւրն տեսանեմ Ամմոնի,
Բայց արհաւիրս և խրատութիւն վայրենի։
Դահիճ 'ի ապաս կրօնից կացեալ քուրմ անգութ,
Ըզիուժայնոյն անդ Մոլոքայ ըզզայրոյթ։
Յածուցանէ՝ զարեան որդւոյ Նապաղիա
Ընդ արտասուսն խառնելով հայրենիա։
Անագորոյն գիւն այնորիկ առընթեր
Առեալ ըսպաս Գամովս ատուած հնչտասեր
Ի մըծղընեայ և 'ի զաղիրն պաշտօն,
Ըզ Մովաբայ կլանէ ըզզոհս և ըզձօն,
Յերկրըպագուաց իւրոց եղեռն և ոճիր
Եւ այլ ինչ ոչ առնելով հայց և խընդիր։
Զինչ է կոծդ այդ, զինչ ձայնդ ողբոց և գուժի.
Ըզմի զԹամուզ ողբայք դըստերք Սիդոնի.
Ժանիք ըզդեղ նորա եղծին ամպարիշտք,
Ձեզ տարեւորք գառնան ընդ մահ նորա վիշտք։
Եւ դու, ո՛ զգօնդ Եղեգա, դու իսկ ընդ հուպ
Թառնեացես զոգբ և ըզալեաց քոց ըզծուփ.
Ի զրահեղեզ արտասուս անդրըն նոցին.
Եւ ատուածոց որ յԵգիպտոս հոյլք պաշտին,
Ոչ ըզնոցայն շատ համարեալ քեզ պաշտօն,
Զանմահութիւն տացես այլոց իսկ 'ի ձօն։
Ընդ ծանրակիր բեռամբ Աալասրն քոյին
Հեծեծեացեալ կրեալով 'ի յուս իւր զերկին.

Յաւերժհարստունք և Փաւռնայք և Սիլէնք
Շուրջ 'ի սահմանըս քո տեսուչք և տնօրէնք,
Դիք բաղմահոյլ, յարդարեացեն ընակաւէտ
Զանտառըս քո և ըզլերինս և ըզգետ։
Կացցեն ծառոց իւրաքանչիւր գիւցուհիք.
Եւ նուաճելոցն Հռոմք տերանցն այնոցիկ
Ըզդիւցական ապա զպատիւ գերամբարձ
Շըռայլեացեն, գերեալք նոցին փոխադարձ։
Կայսերք վըճռաւ ծերոց յերկինս ամբարձցին,
Անտինոյ իսկ ընդ շնորհուկըս նոցին.
Եւ նուազագոյնք գըստցին մարդիկ քան ըզդիս։
Դու իբր 'ի փառս յայնժամ երկիր պարծեացիս,
Եւ որպիսի՞ ինչ ըզքեզ լոյս գերարփի
Ծագեսցէ գիւն ընտանութիւն այդպիսի։
Եկայք եղցուք, ազգ, արծաթ 'ի ձեռին
Աղաչաւորք շուրջ 'ի բազինըս նոցին.
Կազմք նըւաստից իսկ նորա կան և պատրաստ
Մահկանացուաց առնել ըզկամս իւրեանց ազդ.
Եւ 'ի Դեղփիս և 'ի Դեղրս յարաժամ
Եւ յաւազուտս իսկ Ափրիկեայ տան պատգամ։
Դիւրամատոյց 'ի Դոգոնէ է գարիր,
Դիմելոց անդրը պատգամաց 'ի խընդիր.
Ուր մարգարէ 'ի յանտառի անդ կացնի
Ուսուցանէ քեզ որ ինչ գէպք ապառնի։
Սակայն առ ի՞նչ շահ հարցանել երբէք զայն,
Թէ են պատգամք նորին խորհուրդք անթարգման.
Զինչ իսկ օգուտ 'ի գիտելոյն իցէ զայն,
Թէ անհրաժեշտ ճակատագրին է սահման.

Հիմ ըզբարեացքն, զորոց է մեզ կասկած,
Լինել բնաւին մեզ 'ի խընդիր հաւաստեաց.
Գոնեա թողցէ մեզ հանդերձեալն անքաւոյգ
Տեղի յուսոյ, և նուազ արկցէ երկեղուկ:
Այլ չէ ինչ փոյթ. որ ինչ երկինք ըսպառնան
Պարտ է անժոյժ ըղձից մերոց գիտել զայն.
Թէ արքառոց ինչ ոչ յայտնեն փորոտիք,
Ի թռիչս հաւուց որոնեացուք զայնոսիկ...
Ո՛ զգօնութիւն հռոմէական, եղո՛ւկ քեզ,
Իմաստութիւնդ ամենական զի՞ գործես.
Ո՞վ այլանգակ պաշտօն, ո՞ կրօնք աղաղղիք.
Անձառելեաց, աւա՜ղ, գաղտնեացդ այդոցիկ
Ինձ կենդակարծ խորհրդատուքդ իսկ իցեն,
Զորս հոլանել քեզ զայնոսիկ չէ օրէն:
Այլ մինչ նոքա առնեն կարի իսկ 'ի ճահ
Ըզզառանցանսն խօլական ամրապահ.
Եբրայուհին տրգէտ և իսկն իւր մանկիկ
Ինձ զամենայն ինչ մերկանան աւասիկ.
Զի բոլորով սրբաթիւ ըզտէր աստուած մեր
Եւ յամենայն անձնէ պարտիմք մեք սիրել,
Ըզգերագոյն Էն՝ որ զերկնից խորանարդ
Եւ զտիեզերս համայն ըստեղծ և ըզմարդ,
Եւ որ միայն Ես-Էմ-ը Էն յորջորջի,
Ճշմարտութիւն վըստահ և կրօն սրխրալի
Ի՞նչ 'ի յերկիրն յայն 'ի նըստեմ ճանճանչն այն
Ածէ զաստուած ինձ և ըզմարդ յերևան:
Այն և եթ մարդ երկրի չեղև նաւակոծ,
Զի 'ի մրրկաց ըզնա աստուածն իւր կեցոյց,

Ցորոյ 'ի ասստ դըզբրդին կարգք տարերաց,
Հարկի բնութիւն կալ յորինացն իւր 'ի բաց,
Զորս եդ նա ինքն 'ի սկըզբանէ աշխարհի,
Եւ ոյց տնօրէն նոցին են կամք իւր արհի:
Աղդն այն անկեղծ վկայէ ինձ ցարդ որ վասն իւր
Գործեալ յերկնից զըսքանչելիս բազմահոյլ,
Կատարելով ըզյիշատակ նոցին կից
Տարեկանացն իւրոց յաւէրժ ընդ տօնից:
Զանցից նորին ինձ աստանօր ըզպատկեր
Մարթէր 'ի տաղս իմ յայտոսիկ նըկարել.
Ո՛բպէս ծովուն նըմա տեղի ետ կոհակ,
Եւ իբրը ժայռք լուծեալ հեղան 'ի վրտակ.
Գետք ահաբեկ որպէս դարձան յետս ընդէմ, [ՁԵՄ:
Ի՛բր աստղքն պերճ տուընչեան կառեաւ յիւրքն
Այլ 'ի յապուշ հարեալ յանկարծ ընդ ճանճանչ
Զոր մարգարէքն սուրբք ծագեն հիասքանչ
Ցազգի որ գնայ ընդ մէջ հրաշից ճոխաձեմ,
Ըզկայ առնում 'ի տեսարանսն վրստեմ:
Մինչ ամփոփել թըւին երկինք զիւրեանց տուրս
Ցանդորբաւէտ և եթ յերկայն 'ի յաւուրս,
Իբեղնաւոր միայն խաչանց 'ի նախիր,
Ցարօտ պարարտ և յարդաւանդ 'ի յերկիր,
Վեհագունից անդ մեծութեանց տարփածուք
Աստուածարեալք և երկնակրօն մահացուք,
Մոլորականք ընդ ամայի անապատ,
Մաշկահանդերձ ու 'ի քաղաքաց տարանջատ,
Դուն ուրեք անդըր պաշտօնեայք անողոք
Ահաւորօք և եթ գառնան սպառնալիք:

Պատգամաւորք՝ որք զարքայից արքային
Առ Թագաւորս ածեն ըզսատ ահագին,
Թըշնամանեալք և հալածեալք գառն 'ի հեռ,
Շըղթայակապք, մատնեալ յանէծս 'ի սուսեր,
Ղօղին 'ի յայրըս խընդամիտք ընդ աղէտ,
Ըզհաց ցաւոց ճաշակելով անձկաւէտ.
Գէր 'ի վերոյք մահկանացուացըս գոլով,
Զորս ոչ արժէ աշխարհ ըզրիւրն իւրով։
Յաճախագոյն նոքա սպառնան, զի աստուած
Մերժեալ 'ի սպառ թողցէ զայդի իւր 'ի բաց.
Եւ զի երկին այլ, և երկիր հաստեալ նոր,
Գոյլ ընդ գառին ճարակեսցին անգանոր։
Եւ զի յագեալ տէր յերընջոցն արենէ,
Զանզօրս 'ի բաց ըզպատարագսն բարձցէ,
Եւ մատուսցի նրմա նըւէրն այն ամբիծ
Ընդ ամենայն տեղիս յազգաց բոլորից։
Երկիր զբոզբոջն ըզվնեսցէ ցանկալի.
Եւ ճառագայթք փառաց սրբոյն Սիոնի,
Ուժ ըսպասեալ մընան կըզգիք համօրէն,
Ճաճանչագեղ շուրջ համասփիւռ նըշողն։
Այլ 'ի փառացն անձառից շուրջ պարագիր,
Ի նոր յանկարծ ձըգին նոքա 'ի տեսիլ.
Այլակերպեալ 'ի սպառ արդարն աւասիկ,
Ոչ փառք 'ի նմա և ոչ տեսիլ գեղեցիկ.
Այր 'ի հարուածըս, գէմք նորա գեղափայլ
Քան զամենայն որդւոց մարդկան նըւազեալ.
Յինքն ըզմեզայ մերոյ ըզբեռն բառնայ,
Հարեալ առ մեզըս մեր յերկնից անխընայ.

Գըրեալ 'ի մի ընդ անօրէնս 'ի համար,
Ածեալ 'ի սպանդ գառին հեզոյ 'ի տիպար։
Եւ ո՞ զպատկերըս զայսոսիկ զանազան,
Բայց ինքն Աստուած առնէր նոցա յանդիման,
Այն որ ցերու զժամանակին քօղ 'ի բաց։
Ըզտէր նոքա մեզ աւետեն և զԱստուած,
Այն որ իշխան խաղաղութեան և հըզօր,
Եւ սքանչելին է և միայն ահաւոր։
Զորոյ արքայք ըզդահոյիւք խոնարհին,
Հնձեն ոսոխք անկեալ առ ոտս նորին.
Արքայութիւն նորա սրփռեալ ընդ աշխարհ,
Յաղգաց 'ի յազգըս տիրեսցէ մինչ 'ի սպառ։
Անփառունակ ծածկեալ վիրք 'ի մարմնի,
Յերրուեալ հօտին՝ 'ի մահ հովիւն հարկանի.
Ակընկալոյց յայն՝ զոր արար տիգախոց.
Աղգն հիացմամբ զահի հարեալ առնու կոծ,
Նրւազագոյն կորզէ յաչաց արտասուս
Մահ անդրանկի միակ ծնողին իւրոյ յոյս։
Շառաւիղ պերճ ընդ Դաւիթ տեսանէ,
Ցընեալ յառաջ քան զարուսեակն 'ի տեառնէ.
Իմաստնագոյն և բարեբախտ 'ի նըսէհ
Եւ քան զորդին իւր Սոլոմոն ընդ վեհ.
Նոյն ինքն ապա 'ի չարչարանըս գարձեալ
Տեսանէ զնա, և զարհուրի հիացեալ։
Գերիդ չըքնաղ բաբելացւոց արքային,
Գեղ տեսարանըս պատրաստէ տէր կըրկին.
Բազմեալ յաթոռ իւր, և յահեղ 'ի բարբառ
Իշխանութիւն և զօրութիւն անըսպառ

Աւանդէ նա որդւոյ իւրում, որ մատչի
Յաղթանակաւ աւասիկ հօրն առաջի։
Այլ վաղ ընդ փոյթ քեզ տեսարանքդն փոխին,
Զենեալ նոյն ինքն հանդէպ աչաց քոց որդին։
Մատնի օծեալն 'ի մահ, աւերս ամայի
Ապականեալ կայ սրբութեանդն տեղի.
Եւ քահանայն մեծ արհաւրօք ահա լի.
Թոնարհ յերկիր անկեալ ընդ տիղմ թաւալի։
Տաճար քոյին տապալեալ կայ և սեղան,
Եւ կորուսեալ ըսպառըսպուռ ամենայն։
Այլ տեսանէ ապա նոյն ինքնն գերին
Դարձեալ ըզբնաւս անդրէն 'ի կարգն առաջին,
Եւ զքաջայաղթ աշխարհակալս ամենայն
Անհետացեալ հանգուստատիպ փայլական.
Տեսանէ նա համայն ըզծնունդ և ըզմահ
Ըզպետութեանցդն որ կացին գերագահ։
Ո՛վ Բաբելոն, դու վախճանիս ընդ պարսկաս.
Գոռ յաղթողաց քոց Ալեքսանդր առնէ զրաս.
Պատուհասէ Հռովմ զՆիլոգա, և հանէ
Ըզպարսկայնոյն նա ինքն ըզվրէժ 'ի նմանէ։
Սատակեսցէ նա զպետութիւնս ամենայն,
Եւ ոսատակիչն ինքնին բեկցի գաւազան.
Եւ պետութիւնն յաղթող դարուց և ազգաց
Հիմնարկեսցի, ո՛ Հռովմ, 'ի քոյդ աւերած։
Մարգարէիցն եւեթ 'ի հոյլս յոգնեալս,
Որք զայսոսիկ յեղանակեն մեզ պատգամս,
Նախասպատմողք լեալ աւետեաց այսոցիկ,
Ոչ համօրէն ըզկայ առնուն աքանչելիք,

Այլ որ երկնէրն 'ի միտս ըզմեծըն զայն գործ,
Թըւի զնորին բարձրեալն ըստէպ տալ ըզփորձ,
Եւ յանդիման աչաց մերոց 'ի զընին
Յաճախագոյնս ածէ զպատկերըս նորին,
Ըզնորհըրդոյն մեծի աղօտ ցուցեալ մեզ
Ի նախագիծս անդ 'ի տիպարս ըզհանդէս։
Ի փայտակոյտ առեալ ածէ 'ի խարոյկ
Զորդի հնազանդ գորովագութ հօր բազուկ.
Նա առ սեղանն պատարագ մատչի հեզ,
Եւ առ 'ի ձիգ ձեռին յանշարժն ողջակէզ
Կաղմ և պատրաստ կայ անյողդողդ քահանայն,
Հայրենին ոչ այլադուստեալ կերպարան։
Գեղեցկագոյնըն պատանեակ և սիրուն
Լեալ վաճառիկ վարի յօտար գերութիւն.
Եւ 'ի խորոց անարգանաց գեր 'ի վեր
Ածեալ 'ի փառս, յաչ և յերկիւղ և 'ի սեր,
Երկրպագեալ 'ի քաղաքաց օտարաց,
Մանաւանդ ապա եղբարցն տայ դրժողաց։
Արեան գառինն պատկառեալ 'ի գրոշմած,
Տեղի հրեշտակն սատակիչ տայ 'ի բաց,
Խնայեալ 'ի սեռամն եւեթ ներկեալս 'ի յարիւն,
Դատապարտից տանցն ճարակ գոլ սրրոյն։
Ի ձողաբարձն ամբարձեալ զաչս 'ի նպատակ,
Ապրէր հարեալն 'ի մահ դէտակն երանեակ։
Մահահրաւէր տիւն այն նրսեմ տրմարալի,
Յոր քահանայն մեծ 'ի կենաց վրճարի,
Հիքացն յոգունց՝ զորըս փրրկէ մահ նորին,
Յապաստանացն՝ ուր տարագիր պանդխտին,

Երանաւէտ և շնորհաձիր ծագէ օր։
Ընդ մեղապարտ որեարն արդար ուղևոր
Կորընչել յանձն առեալ 'ի ծով ընկէցիկ,
Փրկէ զնոսա 'ի յալեկոծէն մրրիկ.
Երեքօրեայ մնան 'ի կիտին որկորուստ,
Որ թուէրն ըզնա կլանել յաւէրժ 'ի կորուստ,
Վերկենցաղի նոյն ինքն. և այս համբէն
Ինձ ըզնորհուրդն երկնից անգուստ աւետեն։
Եւ ժողովուրդն այն մարգարէ հետ ընդ հետ
Ի ցանկալին առաջնորդէ ինձ 'ի կէտ,
Յորում փրրկիչն գուշակեալ անքանիցս,
Եւ զորոյ տայ նա ինձ այսքան նախագիծս,
Հաստատեսցէ ըզսրբազան զիւրն գահ,
Զայն զոր տաղիցս այժմիկ երգել է 'ի Ճահ։

ԵՐԳ Դ.

Կործանանկեալ գահք, պետութիւնք տապա-
Եւ գաշտորայք 'ի գիսակուներս ծածկեալ, [լեալ,
Հալածական սրփռեալ ազինք ցանեցիր,
Եւ որ ինչ այլ ազէաք գործեալ ընդ երկիր,
Զորրս վրիպակ հանուրց կարծիք համարին
Իրաւապէս յորջորջել խաղքս բախտին,
Խաղք այնորիկ են՝ որ սրբոյն գոլով տէր,
Ըստաստուծոյ ըզմոլեգին կիրքս մեր
Գազանածածուկ իւրոցն առնէ խորհրդոց.
Եւ զանազգակ նուաճեալ 'ի մեզ զախտից բոց,
Զաստուածայնոյ իմաստութեանն նոքօք
Ըզսահմանեալ ածէ ըզկարգս 'ի յամբոկ։
Զինչ փառամոլ աշխարհակալք գործեն գուն
Բայց զարգացումն տալ կրօնից վաղագոյն,

Հեռ և հերձուած և պատերազմ մարդկային
Յաճախեցին և և ըզփառս նորին.
Ճշմարտութեան վրկայ կրօնիցն այնորիկ
Վէպք նոցին շատ են աներկբայ հաւատալիք։
Փարթամ կեղծիք 'ի սեթևեթս պէսպէս
Հաճոյ զտաղից գործեն ըզգեղ, գիտեմ ես.
Սնոտեաք բերկրիմք, և ատեղծք հրաշից խաբուսիկք
Գիշերաքան երկոց մերոց են խայրիք։
Այլ այսոցիկ սնոտի զարդուց յօրինուած
Ատուածանուէր տաղիցս ածեն ըստուերած.
Սանածծարայ այլայլախառն տաղից
Ըզգրժպատեհ յանդգնութիւնքն թողից.
Ի բաց կացցեն 'ի բաց պրչրանքդ այդ յինէն,
Զոր դատապարտ պատճառք տաղիցս իմ առնեն.
Հոգի վիպացս է ինքնազարդ պարզութիւն,
Ճշմարտութիւն ատա ընդ հրաշից պար առնուն։
Ամենակալն որ 'ի ձեռին ունի զսանձ
Խաղաղութեան և ըզհինից յարձակմանց,
Յանդորրաւէտ բազմեալ յերկնից 'ի կամար,
Յեղափոխէ նա ըստ հաճոյս իւր զաշխարհ.
Մինչ չև կրօնիցն զոգ աղգաց լեալ հանուրց
Կրցորդութեան զոգ ընդ իրեարս և հանգոյց,
Միահեծան ըզտիեզերս ամենայն
Ընդ պետութեամբ միով գրաւել ետ հրաման.
Եւ փառամոլ հռովմէական ցանկութիւն
Ի կատարումն հրամանին գործեաց գուն։
Այլ մեծազօրն այն պետութիւն լայնատարդ
Լեալ տիրանենդ գաւակցութեան 'ի յաւար,

Տիրապետեն 'ի նմա աղմուկ և հերձուած.
Կամի նդ երկիր հնազանդ նոցին օրինաց
Ընկերահաշտ կրցորդութեան բոլորից
Պաշտօնեիցն ատուածայնոց աշակից
Արքանեկել նորոցն 'ի նպատս հրամանաց,
Զի անխափան ըզբանն ընդ ծագս աշխարհաց
Լիցի նոցա տանել ազատ ընդ ուղի
Ընդ պետութեամբ միոյ ուրուք իշխողի։
Եւ աւասիկ յատուածատատ 'ի հրաման
Ազատութիւն հռոմէական պետութեան
Խրախոյս իւրումն 'ի զէն անդրէն տայ զօրու
Վատթարելումն յերեսաց Կեսարու.
Եւ մահացու ընկալեալ վէրս 'ի յանձին,
Ընդ Բրուտոսի զրաւեալ փրչէ նա զոգին։
Եգիպտուհին իշխեալ յանդուգնն գրչիսոյն
Ցիւրոց նաւացն 'ի սպառազէն բազմութիւն
Զարևելեայս զօրաժողով զաղգս առնել,
Թոյլ և անմիտ ինքն 'ի փախուստ անսի էլ.
Եւ ընդ նմա փախեալ տորմիղն բոլոր,
Զամօթապարան ըզհետ ձրգեալ տարփաւոր։
Շրջթայակապէ ըզհետ կառացն իւր ապա
Մինչև 'ի Հռովմ 'ի քարշ ածեալք յԱւգոստեայ,
Գրնան Գելոնն 'ի միասին ընդ Արաբ,
Կիզեալն 'ի տօթ ափրիկեցին 'ի հրատապ,
Եւ որ 'ի ցուրտ ազգն 'ի հիւսիս հեռաբնակ,
Յաղթականին չքոյ 'ի պերճ մրրցանակ.
Եւ պարթեւազն ահաբեկեալ վաղ ընդ փոյթ
Զյափշտակեալն 'ի Կրասոսէ կողոպուտ

Երերագին ձեռամբ 'ի նուէր յաղթողաց
Դարձուցանէ ըզդրօշս անդրէն յետս 'ի բաց։
Ի զուր և Հաւոք յամուրս Ալպեացն գիմեն.
Ի սասա շանթից նուաճի երկիրն համբէն։
Մաքնչեալ Երասխ գրժոխմբեր կամրջին,
Որ կայ զնովաւ 'ի նախատինքս նորին,
Կրկի զնախնոյ գոռոզութեան իւրոյ վրէժ,
Եւ հեզագոյն, նուաճեալ Եփրատ, գնայ 'ի վէժ։
Խաղաղասէր իշխան ընդ ծով ընդ ցամաք,
Աղխէ զմեհեան մարտին Աւգոստ ամրափակ.
Փակի մեհեանն այն՝ ուրանօր հերձուած ժանտ
Ի պրզընձի կայ 'ի շրջթայս պարաւանդ,
Եւ զայնքանեաց լալով ընդ վայր գաւանաց
Եւ զմոլեգին հինից ըստէպ ձախողուած,
Արիւնբուուշտ հեծէ բազմեալ առ զայրոյթ.
Ի նիզակաց ու 'ի սուսերաց շեղջակոյտ։
Դաշտորէից եղծելոց յար 'ի նախճիր
Շնորհէ զնախնին անդրէն ըզդեղ մրջակ ժիր.
Վաճառականքն տարագնաց 'ի ծոցոյն,
Ուր ապաւէն լաստից երբեմն էր նորուն,
Նաւատորմին իւրում 'ի չու առնէ ազդ
Պարզել ընդ ծով անդորրաւէտ զառագաստ։
Քերթողք 'ի զնին չբքնաղ թատերն 'ի յապուշ,
Հոգիահրաշ եղեալ նորոգ 'ի յաշխոյժ,
Տան աւետիս զի զհետ հրաշից այնքանեաց
Հասցեն Հռոմայ ազգեալքն յիւրոց պատգամաց
Բարեհրչան աւուրք և դար երջանիկ,
Ոսկեղինին 'ի ախպ գարուն այնորիկ.

Նոր 'ի յերկնից ազգ 'ի յերկիր ինչպէ վաղ,
Եւ զիւրն անդրէն առցէ երկիր ախպ չբքնաղ.
Սուրբ ամենայն ինչ եղիցի ընդ երկիր,
Քաւեալ 'ի սպառ թէ է մեացորդ ինչ ոճիր։
Հրաշիցն 'ի լուր աւետեաց յոյս արծարծեալ,
Փոփոխութեանքն մեծի կայ ակընկալ.
Ընդ արևելս հանուրց յայնժամ աչք շրջին,
Յաղթականին անուն սպասեալ արքային,
Որ 'ի ծագաց՝ ուստի ածէ զսիւ արև՝
Գայցէ զհանուրս 'ի հնազանդել ընդ իւրև։
Զարթնու Սալիմ յաւետաւոր 'ի ձայնէն
Առ 'ի խընդիր ոյց զաւետիսն ազգ առնեն.
Ընդ սրբբազանս անցեալ զաւակն Յակոբայ
Մարգարէից իւրոց ընդ տառս, և ահա
Գտանէ անդէն ըզժամանակն անվրիպ,
Զորոյ զբերկրանս նրկարագրեն նոքա ստէպ։
Հասին աւուրք՝ որոց մեային հարքքն մեր,
Ահա 'ի խոփ ձուլին նիզակ և սուսեր,
Ոչ ևս 'ի մարդ պիտանացուք և յաւեր,
Այլ առ 'ի զգուշն խոպան առնել պրտղաբեր.
Գիրկս աւասիկ խաղաղութեան 'ի համբոյր
Արդարութիւն արկեալ փարի ողջագոյր.
Փայլակնաձև սուր պետութեան վրէժխընդիր
Ոչ ևս ընդդէմ շկահէ այլոց 'ի գերդիր.
Բարեբաստիկ հանուրց նրսեհ մահացուաց
Աւետէ զմերըն մեզ ըզբախտ գերազանց.
Ընդ այլազգի կամք ընդ լրծով անիշխան,
Ի ձեռանէ կապտեալ Յուդայ գաւազան.

Այլ դրաւ փառաց անարգանացս է մեզ գոյժ.
Լիցի խոստումն աստուածային մեզ 'ի յուշ:
Տառապելոյ ազգին 'ի յայց յայնժամ գայր
Այր մի, թէ պարտ իցէ կոչել ընդ այր.
Որ 'ի Ներսէս յանկեան ուրեք երևեալ,
Սատեկ բնութեան աստուածապէս տիրարար:
Բանին անելոյս բիբք 'ի նորին 'ի բարբառ,
Ակնախնդրիչ զմայլեալք յարփին 'ի պայծառ.
Նիգք 'ի սատեկ նորա բեկին անվրկանդք,
Ի լրսելեաց արկեալք խոփան 'ի ցուրտ անդ.
Լուծեալ համերն 'ի կապանաց համարձակ
Շուրթն ըզլուծիչն օրհնաբանէ ժիր 'ի նուագ.
Հէքն որ ըզգօս ածէր զանդամս իւր 'ի ձիգ,
Հրլուս 'ի սատ նորա գտանէ զայնոսիկ.
Որ 'ի ցաւոց կայր 'ի մահիճս անդ անյոյս,
Ըզմաղծելոց սրբրեալ զորդւոցն արտասուս.
Ինքն իսկ 'ի սատ նորին զահի հարեալ մահ,
Եւ ընդ աւարն առեալ ոչ ևս է վրստահ:
Սոսկումն ահեղ և զուարճախառն արհաւիր.
Ամենազօր ձայնին 'ի լուր՝ կենդանիր
Յառնէ մեռեալն երիզապինդ 'ի շիրմէն.
Փարի զնովաւ քոյրն և պակնու յերկիւղէն:
Ոչ վերջոտնեալ նա զգեաս յետոյս նահանջէ,
Եւ ոչ զատեզս 'ի յընթացիցն կասէ.
Ընդ վայր նրշանս աղաչի տալ 'ի յերկնից,
Ոչ նա 'ի լրումն ընդվայրախոյզ գայ ըզձից.
Ի մեզ ևեթ հրաշագործէ, մեզ ևեթ
Ըզզօրութիւն իւր ցուցանէ փրրկաւէտ.

Բառնայ ըզցաւս 'ի մէնջ և զախտս 'ի բացէ.
Եւ զմեզ անդրէն դարձեալ 'ի լոյս վերածէ.
Ամենակալ բազկի նորին զօրութիւն
Աներևութական աստուածայնոյ է տիրոյն:
Ոչ ակն ևեթ հաճի հրաշէցն 'ի տեսիլ,
Այլ պատգամացն 'ի լուր կայ ունկն իսկ յակնիա.
Մերթ ահագին սպառնայ չարաց դատակնիք,
Վրսեմք 'ի յայտ մերթ 'ի նմանէ գան գաղտնիք.
Անայլայլակ ինքն ըզնոսին 'ի յայտնել,
Ըզյաւերժից ճառէ զփառաց իբր ընդել,
Հանուրց զարմանքս գործելով լրսելեաց,
Ի զարմանաց ինքքն կարի քաջ 'ի բաց:
Թրւի 'ի նոյն ծընեալ 'ի փառս խակապէս,
Այլ իւրայոցն անփոյթ փառաց յայտնի մեզ.
Խրատի զնովաւ գիմեալ 'ի լուր ամբոխ հոծ,
Ինքն 'ի ծանուցեալ անտի սատիցքն իւրոց
Ոչ ամբոխ աչառանօք ինչ՝ 'ի փոյթ
Ըզհետաքրքրոցն ողորմելոյ ըզզայրոյթ.
Զուր և ընդվայր է քրրթմընջել հակառակ,
Հարկ պատգամաց նորին է գոլ հրպատակ:
Զէ նրմա փոյթ թէ ոք ըզնա լրքանէ.
Մասչի համբակ ոմն և հայցէ 'ի նմանէ,
Հրաժեշտ բնաւից տրեալ գընալ նրմա զհետ,
Սակայն պարապ խընդրէ վայրիկ մի ևեթ,
Մինչև հողոյ երթեալ ըզհայր իւր տացէ.
Իսկ նա այժմէն իսկ եկ ըզհետ իմ, ասէ,
Եւ մեռելոց թող ըզմեռեալքս թաղել:
Հապա թողցուք, մի ինչ լիցի մեզ արդել.

Թողցուք ըզքնաւս, և զկեանս նորա գնասցուք մեք.
Այլ չէք գըլխոյ նորին գաղար չէք ուրեք։
Օրէնըսդրի այսպիսւոյ զինչ լիցի յանդ.
Այն զոր Պլատոն առաքինւոյն գուժէ վասանդ.
Նա ըզդիւցազն իւր պատրաստակ վըշտակիր,
Որ ինչ զայրոյթ չարաց նիւթէ նմա ոճիր.
« Ընդ երկեալ իւրում, ասէ, 'ի յերկիր,
« Բարձցի յերկրէ հալածական տարագիր,
« Աղեգանեալ և ընդ արիւն թաթաւեալ,
« Բազկատարած 'ի փայտ մահու բևեռեալ։
« Թաղաղութիւն ծածկեալ 'ի խորըս սըրտի,
« Առհաւատչեայ անմեղութեան մահացուի,
« Դու միայն դու լիցիս նըմա 'ի մահուն
« Խրախոյս ընդդէմ վըշտացըն կալ աննըկուն »։
Լըցան ահա պատգամքն, արդարըն զենաւ.
Դըստրդեցաւ երկիր, եհաս վաղ համբաւ
Յափանց հիքին Յորդանանու 'ի Տիբեր.
Թըռեան քարոզք ընդ տիեզերս անվեհեր,
Ի լուր ազգաց զայն և ազանց հրաչակել.
Եւ ընդ համայն երկիր բարբառ նոցին ել։
Աշխարհեցէք, լերուք նըմին խաչակիցք,
Թէ և ծանուանց իցեն մեզաց 'ի ձեզ բիծք,
Ձեզ քաւութիւն պատարագաւըն լիցի։
Ըզկենդանատուն բևեռեցիք 'ի խաչի.
Այն, զոր ընդ քարշ իբր յանցաւոր մահապարտ
Զըգեալ գահիճք ձեր ածէին տարապարտ,
Տիպ և ձաձանչ է և որդի բարձրելոյ.
Եւ որ ըզլոյս բանիւն իւրով ած 'ի գոյ,

Ի գերեզման եդեալ նըստիբէր անդ 'ի հող.
Սակայն ընդդէմ մահու եղև նա յաղթող,
Եւ զգըժոխոց սանդարամետս 'ի յաւար
Ասուածայնով իշխանութեանքն իւրով հար։
Ըզդոզանի հարեալ բնութիւն և պակնոյր,
Տնանելով ընդոստ 'ի քնոյ զհաստիչ իւր.
Նա կենդանի է, տեսին աչք մեր ըզնա.
Հաւատարս մեզ ընծայեցէք անեղբոյս։
Նորանըշան գեպք, հաւատալ հրամայեն.
Եւ ընդ հաւատս ահա փոխի համբէն։
Ի՞նչ այսպիսիք ըզմեզ ձըգել 'ի պատիր
Կարիցեն արք պարզք 'ի բարբառ և 'ի գիր,
Որք իւրովի զարկարութիւն իսկ իւրեանց
Խոստովանին և ըզվրիպակ և զյանցուած.
Որք ոչ ըզտոհմ իւրեանց ծածկեն ըզնըւաստ,
Ոչ 'ի տեսանել իւրեանց ըզկաղն 'ի յուրատ.
Որք ըզտագնապ վարդապետին իսկ իւրեանց
Եւ զտըրամութիւնսորին պատմել չառնեն զանց։
Ինքն 'ի տեսիլ մահուն հնծէ տըրամագին,
Եւ նըւաղեալ լըքեալ անկեալ 'ի գետին,
Ըզբաժակին՝ զոր ըմպել պարտ էր նըմին,
Թէ իցէ հնար, խընդրէ զանցուցեն ըզդառին։
Լըսել բնութեան, աղէ ասա դու ինձ արդ,
Իցէ՞ արժան ինչ գիւցազին, իցէ՞ պարտ.
Ըզթաղծելոյ բնութեանն 'ի յինքն ըզբարբառ.
Հեղձոյց Սոկրատ և լըռեցոյց զայն 'ի տպառ.
Խաբէութիւն բազմաբեղուն 'ի հրապոյր,
Ի հզօրագոյն պըճնէ 'ի գեղ ըզվէպ իւր։

Ոչ նենգութեան ինչ, ասիցես, կասկած ինձ
Մատեանք նոցա տան մերկք ճարտար 'ի հնարից.
Այլ պարզամիտք՝ մոլորեցան նախ ինքեանք,
Լեալ անհեթեթ գիւրաւ կեղծեացքն հաւանք։
Աղէ գրեսցուք գիւրահաւան լեալ նոցին.
Այլ իբր 'ի գիր զայնոսիկ տալ կարացին.
Ուր ոսոխացքն շուրջ ամբոխ մեծատատ
Կայր 'ի հերքումն այնոցիկ կազմ և պատրաստ։
Այն ինչ յաչաց լեալ մահացուաց տէրն 'ի բաց,
Աղդ մի ողջոյն տեսեալ ըղնա վրկայեաց,
Ականատես նրմին ըզցայդ և զցերեկ
Ականջալուր նրմին համայն իսկ ուրեք։
Եւ որ քան զայն որ ուրեք վէպք աներկրայ,
Յորոց 'ի լուր բրռնագատին ակամայ
Լքեալ ոսոխք վրկայք իրացքն գոլով,
Որ թշնամանս ածեն նոցա և դրսրով։
Բաւական քանիք իսկ 'ի վկայից անաւ բիւրք
Վաղ 'ի հաւատս ածան 'ի նոյն մրատագիւրք.
Իմանալոյն և յաւերժին Սալիմայ
Հրրեայք թրլիսաք հոգւով ծանեան զայն յարքայ.
Որում յիւրեանցն անդ 'ի Սալիմ 'ի ձեռին
Իբր արքայի ընդ խաղ զեղեգնքն տային,
Պրսակելով ըզնա գահձացն 'ի տատասակ։
Հարազատացն Աբրահամու որդւոց դասք,
Ի քաղաքէդ տարագրելոյ տուք հաստա
Տեղի 'ի բաց, ահա Տիտոս հասեալ գայ։
Յորպիսի՛ դառն ազէտս ըզքեզ տեսանեմ,
Ո աղդ ընարեալ յերկնից, քաղաքըդ վրսեմ.

Զինչ դու ոձիր ատուածընդդէմ գործեցեր,
Զի յայսպիսի փոխէ 'ի վրէժ զայնքան սէր.
Վրէժխնդրութեան նորին անշուշտ է հանդէս,
Ծանրել ծանրի տակաւ բազուկ իւր 'ի քեզ։
Սակայն չեղև երբէք 'ի սիրա քո նախանձ
Զուգակիր այսմ 'ի պահ իւրոցն օրինաց.
Տես զի քանիք ահա վրիժուց կարապետք
Ըզկործանումն քո գուժեն քեզ ազէտք.
Մարտք 'ի ներքոյ, մարտք արտաքոյ և նախձիրք,
Հուր, սով, ժանտախտ, քանի՛ հոծեալ արհաւիրք։
Հասեալ մերրիկ ըզհետ ահեղ որոտմամբ,
Շանթ երկնառաք ընդ թանձրախիտ ձայթէ ամպ.
Երուսաղէմ ահա անկեալ անյարիր,
Եւ բոցակէզ դառնայ տաճարն 'ի մոխիր։
Հուրըն մոլեալ ընդդէմ կամաց Տիտոսի
Հուր վրէժխնդիր անդրէն դարձեալ վառեցի,
Յատուածատատ 'ի ցատմանէն առեալ բոց
Ընդդէմ յոխորտ յանդգնութեան ժրպրհելոց
Վերականգնել զաձիւնացեալքն տաճար։
Զայն յաղթականն ինքնին Տիտոս յայտ արար։
«Ողբամ ըզքեզ ո՛ ազդ, 'ի քեզ ողորմիմ.
«Ատուած քո վրէժ խնդրէ 'ի քէն. ոչ զէնքիմ.
«Ա՛յո՝ երկինք անշուշտ լինին վրէժխնդիր,
«Պատժեալ ինև 'ի նոսա մեծ ինչ ոձիր»։
Արժանապէս իսկ ահագին այն եհատ
Մեղապարտի ազդին 'ի վրէժ պատուհաս.
Արեան զոհի նոցա զնոքօք էջ նախձիր.
Զմրոտատ որդիս իւր հայրն արար տարագիր։

Զանպրաղաբեր հատեալ մրշակն ոստս 'ի բաց,
Զարմն ապաշնորհ արմատաբի ոչ խրլեաց.
Այլ նորահրաշ փայլէ զնովաւ արդ ճաճանչ.
Բարի քանիք ահա 'ի բուսն հիասքանչ
Ուղիչք երբեմն բողբոջեալ վայրենիք,
Կանաչանան լեալ ընտանի ոստք այժմիկ:
Զի՞նչ տեսանեմ. կապտէ օտարն ըզժառանգ.
Եւ զանգրանիկն յինքն որդեգիր շորթէ անկ:
Նորածնելոցդ իբր որդեկացդ այգոցիկ,
Է բազմածին մայր, իբր երկունք իւր բերբիք.
Ծնանին սերին լընուն զերկիր համօրէն:
Տեարք աշխարհին, զոր ծուփք Նիլեայ ոռոգեն,
Ըզվազելմին Իւրեանց 'ի բաց աւասիկ
Լքեալ թողուն զիմաստութիւն խաբուսիկ,
Զյիմարութեամբ խաչին փարեալ մրատգիւր:
Կրքէ անարդ փայտին Պարթև ըզդլուխ իւր.
Եւ սկիւթացիք թափառականք՝ ատտ նախկին
Գան 'ի մի վայր ընդ օրինաք խոնարհին:
Պարսիկն հատաչին արեգական ձօնէ նուէր,
Այն որ վրիպեալ զհատուածն երբեմն պաշտէր.
Լիբէական անապատին ազգ վայրագ,
Արաբացին յողդողդ, Սարմատն ըստամբակ,
Ըզվայրենի բարուց մեղմն խրատութիւն:
Կորընթացին ընդոստ 'ի խոր լեալ 'ի քնոյն,
Թօթափէ զմեղկ յանձնէ ըզբարս իւր 'ի բաց.
Եւ մերկացեալ Աթէնք ըզքօղ 'ի յաչաց,
Դաւանէ այժմ ըզզօրութիւն Աստուծոյն,
Ում ընդերկար մատոյց յանգէտքս պաշտօն.

Եւ զգօնագոյն լեալ արդ, ոչ ևս 'ի բագին
Անծանօթի գից պատարագք իւր մատչին:
Գրաւաւ Աստուածն՝ ում Գրլատոն էր խուզարկ,
Արիսպագին հընչէ յանուն նորին յարկ:
Գալլիացին գարշի 'ի ժանգն զոհից,
Զոր սուր քրքմին մարգահոշոշ ձօնէ գից,
Ուսեալ զի ոչ երբէք երկինք բարեգութ
Պահանջեցին զարիւն հիքի առ զայրոյթ,
Եւ զի ընդ մեզս իւր սիրտ բեկեալ՝ սրբրագոյն
Քան զամենայն նրւէրս է յաչքս սրբրոյն:
Վրկայք քո վեհք գանձք են քոյին գերապանծ,
Քաղաքքդ պերճ, փառք այսոցիկ գու ափանց,
Ուր ըզմայլեալ Սաւոն ճնմի յամրահոս,
Ի հռոգոնեան ձրգեալ 'ի ծոց բրռնաղբոս:
Դու զոր Սենա պատէ ածեալ գիրկս ըզքև,
Ո՛ բարեբաստ քաղաք, որ գու իսկ զիւրև
Պատեալ 'ի լայն գրգուանս յոլորաբաս քո զայն.
Հաւատք որ զքև նորանըշոյլ ցոլանան,
Ի՞նչ առյապայ պայծառատցին գեղափայլ,
Ի գերիմաստ քոց արքայից պաշտպանեալ:
Աստուածայնոյն ճաճանչ ատաւելն այնորիկ
Վառի զգրքսով իսկ ըզձերով աւանիկ
Բնակիչք ափանց, զորքս Դանուբ և Հռենոս
Թանան յաչիս Իւրեանց տահեալ գեատհոս.
Դուք որ զՏագոս ըմպէք, և գուք որ զԻբեր,
Ցորոց հազիւ յանտառախիտ մայրիս ձեր
Ծագէ ազատ 'ի նրշոյլ տիւ լուսարփի,
Եւ զորքս ծովք անջրպետեալ մեկուսի,

Ամրացուցին ըզձեզ յիւրեանց զերծս 'ի ծոց
Ի զայրագին բարկութենէ Հռոմոց,
Վայրք ուր արծուին նոցա չեհաս փառամոլ,
Ըզյաղթանակ դիտեմ կրօնից 'ի ձեզ գոլ։
Անուանն այնմիկ մեծի ընդ բնաւ տիեզերս,
Ի Թամիսեայ մինչև յինդեան ծովեզերս,
Կերկնի ծագաց 'ի ծագրս ծուներ ամենայն.
Տիրէ համայն ուրեք յաղթողն ներչան,
Եւ ո՞, զոչէ եկեղեցի բարձրաձայն,
Ո՞ իսկ ծընաւ զդոսա մանկուենս ինձ այդքան։
Առ տիրերի փայլէ նա յոգն 'ի ճառանչ,
Անդ պետութիւնն իւր սուրբ կանգնեալ հիապանչ,
Ի Հռովմ ըզդահ իւր զետեղէ անսասան,
Այլ ոչ փառաց ինչ գահոյից ըզձական։
Ընդ ասահմանսն թաթաւեալս 'ի յարիւն,
Ըզդիականց տեսանեմ հոծ բազմութիւն.
Զի առ 'ի վայր ևեթ անտի կործանել
Մասչէր յայնժամ որ ոք մասչէրն անդր 'ի վեր.
Ըզդասապարտ հօտին հաւասք 'ի դարս անդ
Զերախայրիսսն մինչ ածէր պերճս 'ի սպանդ,
Մեծագունից յայնժամ հովիւք իսկ նորին
Պատուհասից ակընկալեալ մընային.
Զի անդ ուրեմն աւագութեամբք այսպիսիւք
Հաւատացեալք մեծարէին գերարդոյք։
Զինչ այդ ոչորմ ինձ ասասանօր տեսարան
Բացեալ իմոցս կայ աչաց յանդիման.
Եւ զինչ տանջանքդ են այդոքիկ նորագիւտ։
Զոր մոլեգին հնարի ցասումն և զայրոյթ.

Կէսք իբր ըզջահ օծեալք 'ի ձիւթ բորբոքին,
Ի յամբ 'ի ծուէնս այլք յօշոտեալ անկանին.
Ի խուժադուժ անդ 'ի խաղուցըն հանգէս,
Ի թատերացն արիւնրաուչս ասպարէզ,
Կազմ ըզվագերըս տեսանեմ 'ի նախնիր,
Եւ զառիւծուց յուզեալ զայրոյթ 'ի գըրգիռ.
Բոց խաչ և բիւր տանջանարանք անդ կանգնեալ,
Խոնջք անդանօր դահիճք, և սուրբ բըմթացեալ.
Նոցին ևեթ ընդդէմ գըտեալ անիրաւ
Արդարադոյնըն յինքնակալս անդ 'ի բնաւ,
Հնարի արեամբըն հաչա առնել գըժպըշեաւ
Ըզհնազանդեալ զազգ և զազգինս ընդ իւրեաւ։
Անգութ բընաւք իսկ առ նոսա կայսերք գոն,
Տրայիանոս ինքնին նոցա է Ներոն.
Եւ քրիստոնեայն անուն նոցա է յոգիր,
Անձկան մահու, գիմեն պատժոց 'ի խընդիր.
Երկարագոյնքս չարչարեալք 'ի մարմնի,
Երկարագոյն կրքեն հրդեհեանս 'ի հոգի.
Եւ ոպառնալիք բըռնաւորաց ահագինք,
Թըւին պարդեք նոցա և նուէրք մեծագինք.
Օրհնեն ըզձեռն՝ որ զբանտ մարմնոյն եղծանէ։
Գոլ կենատեացս այսպէս նոցա առիմ՝.
Յաւերժական անուան երբեմն խղճ նանիր
Առնէ այս՝ ըզսէր կենաց տարագիր.
Մինչ պերճ մահուամբ 'ի փայտակոյտ խարուկին
Խոնջ 'ի կենաց խընդրէ համբաւ Պերեգրին,
Ամբարհաւաճ խմաստասէրն այն շնական
Բոցակիզեալ ցընդի 'ի ծուխ ընդունայն.

Այլ թէր ամբաւդ այդ վրկացից բազմութիւն,
Արանց կանանց և խուռներամ մանկըտուոյն,
Զորըս անոտեաց հռովմայեցին գից պաշտող,
Եւ կրակապաշտ պարսիկն առնէ սրախողխող,
Անիշատակ 'ի մոռացօնըս թաղեալ,
Դիմէր 'ի մահ անդր առ 'ի վէպս ևեթ կեալ։
Ողբա զնոցին, ասեն, տրխուր կուրութիւն.
Մոլորութեան իսկ գոն վրկայք անընկուն.
Սինէացին ահա ժըպրհի քուրմ յիմար
Դիցն ըզմարմին իւր ընծայել ձօն ընդ վայր,
Կեղեքեալ զոյն ընդ այլանգակ հաճոյս իւր։
Զոհ վաղնմոյ սովորութեանն անհամբոյր,
Դիմէ այրին տայ անմրուունչ զանձն 'ի հուր,
Չհետ փեսային, յաճախ իսկ ոչ մրատգիւր։
Ո՞չ ապաքէն այժմ իսկ առ մեք տակաւին.
Պահին օրէնքս այս յապառաւմ 'ի յաղգին.
Մոլորութիւն գրժնեայ, օրէնք ողբալիք.
Քանի՞ ազէաք չիցեն կրօնից արդասիք։
Պատկառելիր գու յերեսաց մահացուին,
Որ զատուածոյ բերէ ըզդէմըս յանձին.
Ըզնա երկինք մեծապարգև մեծարեն,
Մոլորութեան երկինք երբէք ոչ օգնեն.
Հալածական ըզդիւաբաղխ արհաւրաց
Եւ ըզվրիժուց հերքէ զհոգին նա 'ի բաց,
Ըզբըռնաւորն անդընդային՝ որոյ ցանգ
Ընդ վիշտս մեր և ընդ չարիս են բերկրանք։
Սա զկոզոպուտ իւր աւանիկ ըբքանէ
Ի սպառնալից քրիստոնէիսըն ասասէ.

Եւ 'ի մարմնոց՝ զորըս ըլկէրն անխընայ,
Ահաբեկեալ մեկնի 'ի բաց փախըստեայ.
Այսպէս ահա սրտութեանց հայրն և իշխան
Անկեալ գընի 'ի գահոյիցն կործան։
Միահեծան նա զարիզերս ամենայն
Գրաւեալ կալաւ անփառունակ և անջան,
Մինչ մարդն մեռ 'ի հաւատալ մոլեգին,
Առանց հնարից մրթագնելոյ զլոյս Բանին,
Գոյր աներկիւղ և անկասկած անձնատուր
Խաբեբային վատագունի 'ի հրապոյր։
Այլ էանց դարն այն, և գիտաց բանալ գէթ
Նախկին 'ի լոյս անդր Ելլադա արահետ.
Եւ 'ի խընդիր լուսոյ Պլատոն հետամուտ,
Ի հրաշազան իւր մատենին կալաւ փոյթ՝
Արհամարհանս ազգել 'ի միտս մարդկան
Ամենատարբ մոլորութեանցն ախոյան։
Վեհ ձեմարանք ուսեալք նորին 'ի խրատուէն,
Ըզաղայութեան աշխարհի զմեգ փարատեն։
Իմաստասէրն ըզգոն բնաւից է արդոյ,
Եւ յարբունիս իսկ յաճախ լեալ մեծարոյ.
Սպառնան կորուստ մեզ փառք նորա համբաւոյն,
Առելութիւն իւր գաւակից է 'ի նոյն։
Սակայն Կելսոս ընդդէմ կրօնից և Պորփիւր,
Զուր զինուորին յատելութիւն 'ի յահուր.
Զինչ թըշնամանք նոցին մեզ զեան գործիցեն.
Ծանրագունից ասա հարուածոց խընդիրք են։
Պարտ էր նոցա կանխել զարդիւնըս քննել,
Առ 'ի զկարդիս մերոյ ըզհիմն քանդել։

Այլ որ ոք խաղ ևեթ առնել գիտիցէ,
Թուսէ 'ի բաց յարիսական 'ի մարտէ:
Տարապարտուց դատապարտին քրիստոնեայք
Իբր ապըստամբք իշխանութեան հակառակ.
Զուր համարին նոցա օրէնքն այն յոձիր,
Որ չէ իսկ մարթ թէ չիցեն շնորհք երկնաձիր.
Որոց օրէնք վարուց նոցին համեմատք,
Սուրբք են և բնաւ ամենեքին անարատք:
Ակն արքայից ածել նոցայն օրինակ
Եւ Ներոնից իսկ գոլ խրատակ հրպատակ.
Զի 'ի վերուստ իշխանութեանց համօրէն,
Աստն նոքա, առնուլ ըսկիզբն 'ի յէն.
Եւ որ նորին իսկ թագաւորն է պատկեր,
Մահկանացուաց առ 'ի նմանէ կացեալ տէր,
Ըզվրէժխընդիր արդարութեան ըզուսեր
Ցերկնից տեառնէն առեալ ածէ 'ի յազգեր:
Ազգք և ազինք լերուք նըմա ունկընդիր.
Զի քրիստոնէլ իսկ ըզնմանէ է ոձիր:
Թէ նըշխահեալ զինուորին ազգք ամենայն
Ընդդէմ բընիկ տեառն անողորմ պետութեան,
Բայց քրիստոնեայն ինքնակալաց ընդ ձեռամբ
Կացցէ հնազանդ, չառցէ նա զէն ապըստամբ:
Տըկարութիւն անզօր թերևըս նոցին
Կացոյց նըկուն և հրպատակս ըզնոսին.
Այլ հիացումն յիս ներգործէ մեծագոյն
Գերաշխարհիկ նոցայն հրզօր զօրութիւն.
Բնութիւն ինքնին 'ի լուր նոցին հրամանի
Հրպատակեալ յահ և 'ի գոլ հարկանի:

Ո՛ անպատում հրաշից տեսիլ հիասքանչ.
Բանան 'ի քաղցր յանկարծ լուսոյ 'ի ճաճանչ
Աչք որ փակեալ կային 'ի մահ արխարագին.
Յառնեն մեռեալք իսկ 'ի խորոց տապանին:
Բանակք կըրկին պապքեալք կըրեն ըզտագնապ
Ի բոցակիզ արփւոյն ճառանչ 'ի հրատապ.
Որոտընդոստ շանթեն երկինք 'ի վերուստ,
Ամբահարեալ մատանեն ըզմին 'ի կորուստ.
Գերմանացին հերքի 'ի հրոյն ահափետ,
Հռովմայեցին յագի 'ի յուղխ փրրկաւէտ.
Եւ զկիսամեռ բանակն անձրև բարեբախտ
Կեցուցանէ, կացուցեալ զայն քաջայաղթ:
Եւ մինչ արքայն ապշի հրաշիցն ընդ պատճառ,
Հըմայս կոչէ զնոսա ռամիկըն յամառ.
Հըմայք չըքնաղ, որ ամպրոպաց տան հրաման.
Հմայեն երկինք ուր փոփոխի կարգ բնութեան:
Ո՛ հրաշք անհաս. խաչըն, գործի ահարկու,
Ինքնակալաց յօրինէ զարդ ճակատու.
Եւ ընդ յաղթող ինքնակալին Կոստանդեայ
Յաղթանակեն փառք նըշանին գերբակայ,
Որ ցոլացեալ լուսաճաճանչ ընդ եթեր,
Ի յաղթութիւն ըզնա իւրև խրախուսեր:
Ընծայելոցն 'ի յիւրականքն գաղանիս
Դիցանըւէր պաշտոնէիցն յԵլևսիս
Ահա Դեմետր արկեալ ոտիցըն կոխան
Տեսանէ զձորձ և ըզպըսակ և ըզխան:
Եւ գու ոչ ևըս գիցուհիդ Արտեմիս
Յեփեսացւոց յերկըրպագուաց քոց պաշտիս.

Պատրաստարանք իշխանութեանդ քոյին
Հոյլք ոսկերչաց ըզյոյս իւրեանց կորուսին։
Դառնան մեհեանք 'ի յանապատ ապալեր,
Եւ ըզբուրվառ դիցն անկելոց 'ի յեպեր
Արգելականն արկեալ 'ի կործ քուրմն 'ի բաց,
Լքեալ թողու զբագինն ունայն 'ի նուիրաց։
Դեղիս երբեմն առ 'ի պատգամս պատրաստ,
Ամենատարար լրեալ նրկուն լեալ 'ի սատ.
Եւ ընդ համերն Ապոլոնի կարկեալ կան
Պատգամատեղք առհասարակ դիցն անձայն.
Պատգամն արքայն արդ և ռամիկն անեղկբանա
Ի հրաշագործ խընդրէ վկայիցն 'ի գամբանս.
Առ մահացուն սպանեալ յինքեանց պատասին,
Եւ խորհակեն ըզդիս՝ զոր արդ պաշտեին։
Ընդդէմ ուղղիցըն գուն գործէ ընդերկար
Աշխարհակալն Հրոովմ կանգնել թումբա ըվայր,
Եւ աստուածոյն իւրում Դիայ կալ պաշտպան.
Ժամ է վրիժուց քրիստոնէին պահանջման։
Զարիւն որդւոց քոց գու 'ի յուշ ածես տէր.
Շատ իսկ կամարք ցարդ վեսպասեանցն թատեր
Շուրջ 'ի բոլոր անպարտ արեանցն հընչեցին,
Զոր հեղ նորայն կռապաշտութիւն մոլեգին.
Հատցես գու վաղ 'ի պահանջել ըզհամար
Դատակընքացըն՝ զորս ընդդէմ նոցին տայր.
Դահիճք վրիժուց քոյոց, աստուած զօրութեանց,
Կազմք և պատրաստք կան 'ի պատիժ եղեռանց.
Եւ Հռովմ անկցի անյարիր հիմն 'ի յատակ,
Իբր ըզԲաբել և զՍիրանենգ քոյդ քաղաք։

Գիտէ գիտէ տէր ուղերձել 'ի կամս իւր
Ըզմահացուաց կուրաց գընացս ըստերիւր.
Գոռք ըզքաղաքս աշխարհակալք թէ նուաճեն,
Թէ յահագին սարսեալ երկիր թընդմանէն,
Ի պետութեանցն 'ի կործանել ըզնովաւ,
Շուրջ արհաւիրք պաշարեն զազգս համագրաւ,
Զինչ գիւցազունքն իցեն բընաւ այնոքիկ,
Որք հիացումն 'ի մեզ գործեն խաբուսիկ.
Բայց պաշտօնեայք արդարութեանն աստուծոյ,
Որ պատուհաս ածէ ստահակ օրերոյ. [թեան,
Դահիճք դըժնեայք աստուածատաստ բարկու-
Եւ պատժարար ցուպ 'ի ձեռին իւր խոտան։
Զինչ Ատիլաս, զինչ իսկ խընդրէ Ալարիկ.
Ո՞ւր Ոդովակր, և յո՞ գիմէ Գենսերիկ.
Զինեալք յանգէտս ըզհետ միմեանց սխոյեանք
Տիրահրաւէրք 'ի հիւսիսոյ գան համայնք.
Ահ առաջի նոցա գընայ զօրավար,
Մատնի նախնին Հրոովմ խրժիցն 'ի յաւար.
Եւ յամենոյ նորին յառնէ վերկինցաղ
Միւս այլ Հրոովմ քան ըզնախնին զայն ջրքնաղ,
Ում տիեզերք համայն լինցին հրպատակ։
Վեհ ծերունեաց գիտեմ 'ի նմա գումարատակ,
Որ ապաղէն իշխանք զերկիր համօրէն
Եռապրատակ խուրին 'ի ապատ նըւաճեն.
Աշխարհակալք առանց արեան ճապաղեաց,
Առաքելոց ժառանգք, յաղթօղք կայսերաց։
Ոչ 'ի նեցուկ բազմախուզող երկաթոյն
Լայնածաւալ նոցայն յենու պետութիւն,

Եւ ոչ վառեալ ըսպառազէն զօրական
Շուրջանակի ըզդահոյիւք նոցա կան.
Այլ բանալեացն 'ի սատա ազինք զարհուրին,
Եւ 'ի սուր սայր աներևոյթ սուսերին։
Նոքա խաղաղ բաղմեալ 'ի բնիկ պալատան,
Մրկնորսայնով կընքով օրէնս ազգաց տան.
Ընդ խուռներամ որդիս 'ի մի կարգէ դաս
Զազատագունեղն ըզքահանայս և զարքայս.
Սոքա զիսոնարհ բերեն ըզդէմս նոցին,
Եւ մեծարանս որդիականս յանձին։
Բաբէ քանի գուլթք գորովոյ ընդ որդիս
Ի հայրենիան յուզին յաւէրժ 'ի յաղիս։
Թէ զյաղթանակս ածել կրօնիցս 'ի համար,
Որ այսպիսեաւ փուլթով յառաջ ընթանայր,
Եւ սատրագրել ըզթագաւորս իշխէի,
Որք ցածուցին ըզգլուխ իւրեանց ամէնի,
Եւ ընդ համայն ուրեք զընալ զուգահեռ,
Ուր յաղթութիւնք նորա առնեն արահեռ,
Ի՞նչ ընդարձակ ինձ առպարէզ բանայր սատ,
Եւ իբր ինձ վէպքս յորինէին բարեբաստ։
Սակայն բընաւ իսկ զինչ մարթէր ինձ այսու
Ուսուցանել որոց չիցեն զաչացու.
Սաւառնի բուն արդ հովանեաւն ընդ երկիր,
Ըզբարուեակսն տարածեալ շուրջ 'ի ծիր,
Ցոր վայր նշոյլք արփւոյն սրփռեալ ծաւալին.
Եւ որ ձրգեաց ըզքնաւս առ ինքն 'ի խաչին,
Երկրպագի անուն նորա աշարկու
Ցարևելից մինչև 'ի մուտս արևու։

Թերևս յաւուրս անդ յորս նոյն հաճեցաւ
Կենցաղակից ընդ մեզ շրջել ընդ երկնաւ,
Հաւատագոյն գոյր ճանաչել ինձ ընդա,
Ի գետափանցն Յորդանու լեալ ընդ նմա
Թաբօրական մինչ 'ի լերինն 'ի վերել.
Ոչ, այլ փայլեն արդ փառք նորա առաւել։
Ահա զՄովսէս տեսանեմ անդ 'ի լերին,
Ելիայիւ հանգերձ կացեալ առ նմին.
Ըզնրմանեն ինձ մարգարէք համարին
Տան աւետիս, և զնա օրէնք հրաչակին։
Ընդոսա 'ի քնոյ լեալ ուր ուրեմն առաքեալք,
Քանի՞ վրկայք ինձ նորանորք յառնեն այլք.
Որք վասն անուան նորա ըզմահ յանձն առնուն,
Եւ սրախողխողք խոստովանին ինձ ընդոյն։
Ահա նա ինքն է, տեսանեմ ես ընդա.
Վրկայեն աչք իմ ինձ ընդոյն աներկբայ։
Այլ թէ չբաւեն աչք, թէ պիտոյ իցէ լուր,
Զայն ճապաղեաց արեան՝ զոր սէրըն հեղոյր,
Կրկնէ 'ի յունկն իմ ահա զձայն բարբառոյն,
Զոր եա երկին յորժամ 'ի նշոյլ ինչ 'ի խուն
Աստուածայնոյ փառաց նորա առեալ վառ
Թաբօրական փայլէր լերինքն կատար։
Այո՝ այո՝ սա սիրեցեալն է որդին.
Լուիցուք, հաւատս ընծայեսցուք, օ՜ն, նրմին։
Այլ ծանրաբեռն է մեզ ասեն լուծ նորին,
Ի գերութիւն միտք մեր և սիրտ նրուաճին.
Խիստ են օրէնք իւր, և հաւատք մրթին յոյժ։..
Վառեալ 'ի նոր իրաւապէս 'ի յաշխոյժ,

Հաստա զբաղբ նոյին եղծիլ զանիրաւ.
Ոչ աստանօր ըզկայ առցէ իմ արշաւ,
Այլ ընդ շաւիղ իւր հեռաւեալ պատ 'ի պատ,
Հալածեցիլ 'ի սպառ զոսոխն անհաւատ:
Զի՞նչ իսկ երբէք արժանաւոր առ 'ի տաղ
Քան զայսպիսի կայցէ մարտ վեհ և ջրքնաղ:

ԵՐԳ Ե.

Բանն ինքնագոյ Էին պատկեր իսկաբանչ,
Եւ Ճառագայթ փառաց նորին և Ճաճանչ,
Զև 'ի հողոյ ստեղծեալ էր ազգ մահացուաց,
Զև էր 'ի լոյս արփւոյն գործեալ ակընթաց,
Ի սկզբանէ նախ քան զերկնի յօրինուած,
Նախ քան զերկիր առնել. էր Բանն առ Աստուած,
Էն մշտաբոր, իմաստութիւն գերագոյ,
Նոյն ինքն Աստուած, նոյն ինքն որդի Աստուծոյ:
Սակայն որդւոյն Աստուծոյ իբր էր հընար
Լինել որդի մարդոյ և գոլ հաւատար...
Լուռ աստանօր ըզկայ առեալ հաւատամ.
Միաբ ապիկար և խրոխտ, թոզ անդր ըզկարկամ
Ցանգրգնութիւն քոյին, և լեր գիւրալուր.
Զի հոգմ չընչէ, այլ ո՞ գիտէ եթէ ուր.

Լքսեմ ևեթ զուժգին նորայն ըզհընչիւն,
Եւ ապշին միաք իմ ընդ նորին զօրութիւն.
Ունկն իմ լքսէ, այլ է անտես աչաց այն։
Թէ 'ի յերկրի ասա յերերի միաք իմ կան,
Հաւասաք զիա գուսար երկնից ածէ 'ի յանկոյթ,
Ցեց 'ի խարիսխ, քօղ ըզդիմաքրն ծածկոյթ.
Լուսաւորէ նա ըզդընացս իմ 'ի հուր,
Որով վառեալ բորբոքի ինքն 'ի սիրտ իւր.
Ըզհետ իմ, ճն, ասէ, գու էկ հետևեսց.
Եաս ինչ լոյս իմ յանմոլար քեզ 'ի գնաց։
Թէ 'ի խոնարհ գու զքոյին զաչքս կալցիս.
Ոչ տեսութեան է ժամ 'ի մութ գիշերիս,
Դէտակն 'ի լոյս տուընչեան հրլու ուսուցչիս,
Ցիւրաքանչիւր 'ի քայլ ոտին քո պարտիս
Երկրպագել Հրշմարտութեանն անքընին,
Դաւանել զայն քան թէ հասու գոլ նրմին.
Եւ գիտութեան առնել ըզսէր նախագաս։
Այլ անհաւատն գիմագրէ ինձ առ այս,
Իցէ՞ ինչ պարտ գերել ըզմիտս 'ի չըզթայս,
Եւ զի՞նչ քան զայն վեհ 'ի պարգևս երկնընծայս,
Գերագունի Էին իցէ՞ ինչ վայել
Ըզհուրն 'ի մեզ, զոր ինքն ելոյց, խափանել։
Ինքն իսկ ելոյց ըզհուրըն զայն, ոչ ժրխտեմ.
Եւ որ լուսով երբեմն ձիրն այն վքսեմ
Առաջնորդեր յանմեղութեան անդ մարդոյս,
Արդ շինանուա գոգցես 'ի նմա և անլոյս,
Աղօտ ինչ բոցն այն գեղեցիկ ծագէ տիւ
Մահկանացուին մեղուցելոյ ըզսրբաիւ։

Այլ անաղօտ ըզնա արդ ջահ հաւատոց
Լուսաւորէ պայծառագոյն ևս 'ի բոց.
Եւ վատ որեարբ իշխէ՞ կոչել զայն մրթին,
Մինչ բարեբարն յայանի Աստուած իսկ նրմին.
Շատ իսկ որ ինչ յայանէ նա մեզ վարկցին զայն.
Ցայս վայր նոցա լեցին սահմանք գիտութեան.
Մատեանն արհի կացցէ կընքեալ ամրափակ,
Զև սահմանեալն յերկնից հասեալ ժամանակ։
Զի՞նչ ինչ նա ոչ ծածկեաց 'ի մէնջ քօղասոյզ
Ի կըշտամբանքս մեր, աւաղ ամօթոյս.
Զիարդ վեհիցն իցեմք գաղանեաց խելամուտք
Թէ տրուպք յեիցըս մեզ են վիհք խորանգունդք։
Բնութիւն համայն մեզ առաջի կայ աչաց
Հանապազոր իբր ըզմատեան գիւրաբաց.
Սակայն քանիք կորեան ցարդ գարք 'ի նանիր,
Առանց իրիք շարժելոյ զմեզ 'ի խընդիր
Որ ինչ 'ի նմա գէթ վերծանել թէ կարեմք։
Եւ հարկ իսկ մեզ մինչ առնեն պէտք բազմագէմք,
Կամ ժամանակն և կամ գիպաց յաջողուած։
Առնուլ երբէք զայն ուր ուրեմն յընթերցուած,
Հազիւ բնութեանն ինչ արգասեաց իրազեկք,
Իսկ ըզպատճառսըն գիտիցեմք ինչ երբէք։
Դէտակն 'ի թատր էիցս, 'ի զուր խուզարկեա
Ըզկազմ նորին խմաստասէրըդ գու վէս.
Դրոշմեալ 'ի նմա կայ. Կա՛ց յանգուգն 'ի բացէ,
Մէ 'ի գարիր իմ այսր 'ի ձէնջ ոք մըացէ։
Այո՛ և էքս իսկ ակնեարեք գըլխովին
Ցընդվայրախոյզ աչաց անտեսք պարուրին.

Եւ որ զանասատ բանեալ յեղերս զովկիան,
Ըզփառամոլ նրաձեռ զեղձրս մարդկան։
Զուր 'ի խընդիր բնութեան գործեն նոքա գուն.
Տեսցեն զարդիւնս, այլ մի զպատճառս նոցուն։
Համայն ուրեք բարձեալ բնութեան աղաղակ,
Տեառն Աստուծոյ քում գու երկիր, ասէ, պագ.
Ակընկալայց լեր, զարմացիր գու ընդ նա.
Անգէտ բնութեան նորին 'ի նա վայելեա։
Մահկանացուի յուսումն ուշիւ պարապեալ,
Զանգիտութեան մերժէ յանձնէ ըզմրռայլ։
Իսկ ընդ հանուրս հետազօտեալ 'ի քրնին,
Անքան երկոց զինչ նրմա վարձք պատրաստին.
Ո՞չ ապաքէն յանգիտութիւն իւր 'ի նոյն
Առաջնորդէ նրմա անդրէն գիտութիւն։
Շառագունիս գու ով խրրոխտ մահկացուդ.
Եւ քրրթմընջէ, կազմ 'ի հանել զիս 'ի սուտ,
Հրապարտութիւն քոյին անասատ. այլ արդ, օ՜ն,
Դարձուցանել զայն 'ի չէք է ինձ ըմբռն,
Լիցուք քոյոց պերճ զարդացմանցդ 'ի խընդիր.
Տացուք զանշուք վէպքս մրատց քոց 'ի գիր։
Խընդիր շահու եւ ըզնախկին մեզ ըզդաս.
Խընամ խաչանց և սէր 'ի հունձ կանխահաս
Մանոյց ըզսուզ ժամանակին մեզ ըզյարդ,
Եւ զասեղաց մեզ ըզշրջանս ուսոյց հարկ.
Մանրթ ինչ էր մեզ զաւուրքս մեր և զվաստակ
Զափել 'ի յայլ խմբն կանոն արդարակ,
Քան յերկնընթաց 'ի լուսաւորան յայնոսիկ,
Որոց ընթացք ըզմեզ են բնաւ անյեղլիք։

Աղդ որ զեղերքս Նիլոսի մրշակէր,
Յերկար ընդ ջինջ գիսեալ զասասելս ընդ եթեր,
Ա՛ռ 'ի սասուգիւ ևս այնոցիկ 'ի զընին,
Ընդ այլևայլ գէտ ընդ նահանգս երկնային,
Բաշխէ զնոսա, կոչէ անուանքս նոցին։
Ներեցէք ով Գալիլէոս և Գասին
Նախնեաց ձերոց, ոյց վարժ 'ի գաշտս աչաց բիբ՝
Ըզդաշտայնոց ետես յերկինս անդ ըզտիպ,
Ըզշեուն ըզթոյ սասեղակերպս և ըզՅուլ.
Վեհ ևքս ձեզ լեցի անուանս անդր յեռուլ.
Եւ Արամազդ ընդ Սասուրենայ ընդ երկին
Աբրահանիկքն անդ Հոխասնեմ պանծասցին։
Այլ ազգ զինչ պահին շընորհք հընութեան.
Ի մրշակաց բրրոխց անուանք որ եգան,
Տրպաւորեն մեզ 'ի յաւերժ յիշատակ
Ըզթերասես մրատց նոցին ըզյրիպակ։
Ո՛վ երջանիկ աղայոյն ծընունդ, յոր Կրչեա
Յասասեղատանց անուն ծագէ բոխատագիր.
Այլ քանիսն անագորոյն իւր դրացւոյն
Ինձ դրժպրհի է չարագոյժ զօրութիւն.
Հեծեծեացէ Որատիոս դառնագին,
Թէ գիսիցէ զինչ գէպք նրմա բաշխիցին.
Աղխաբեր Կարձին տրխուր հայեցուած
Ի ծնունդ նորին ձախողակի պատահեաց։
Դրոշմեալ յերկնից կան 'ի կամարս անդ անվրէպ
Ճակատագրեալ որ ինչ կենաց մերոց վէպ.
Հմայեն յոլովք իսկ այլք, և ոչ լոկ Գարատան,
Ցանգարձագիրն յայն ըզհրմայս 'ի մատեան.

Հաշտս ըզնոսին, հաշտա, ընդ մեզ արասցուք.
Քաջ իսկ, Ռիչլեօ և Մազարէն, վառանէք գուք
Առատաձեռն Մորենայ ընձեռայս,
Որ զանծանօթըս ձեզ յօգէ հեգենայս.
Ահ և գողումն արկցեն հըմայք իւր 'ի ձեզ,
Դողումն 'ի յայլս և գուք արկէք նայապէս:
Սարսեալ ռամիկն յահէ անլոյս գիշերոյն,
Ըզնըւաղեալ կարգայ զարփին յօգնութիւն,
Զինչ այդ ահեղ և սպառնալից երևոյթ,
Որ 'ի յերկայն վարսիցըն գէս 'ի հրանիւթ
Գայ ազմկել ըզսիեզերըս բոլոր.
Աղէ զայրոյթ պատարաստութիւնդ ահաւոր:
Զի զարհուրիս ռամիկըդ վատ և տգուշ.
Ոչ քեզ դոքա պատգամաւորք չարագոյժ
Դիցն ահագին ցասման սպառնան պատուհաս,
Այլ աւագաց այլ արքայից քոց օրհաս:
Առ 'ի զբօսանս արդեօք երկինք զայդ այդպէս,
Կամ առ կարի իսկ մեծարանս առնեն մեզ.
Ուր ձիչ ևեթ բըւոյ զմերովքըս տանեօք
Ընկճել ըզսիրտ մեր բաւական էր արդեօք:
Մի զատեղաց քոց, ով երկինք, ըզնըշալ
Լիցի երբեք քեզ առ 'ի մէնջ արդելուլ.
Եւ կարիցեմք կալ անվեհեր 'ի զընին
Կործան ազի անկանելոյ ամանին. [վըհուկք.
Հմայեակք, բարսմունք, յուսուութք, կըզարթք և
Փաթեթք և գրիչք, գուք քաջալերըս մեզ տուք,
Եւ որ ինչ այլ արգիտութիւն աղխատրոյզ
Ոգեագուրկ յանգուգն յերկիւղ և 'ի յոյս:

Յորժամ մերոց մոլորութեանցըս խուժան
Ի յԵգիպտոս ծընեալ անտի էտ հորդան,
ԻզՀ քաղցրախառն երկնի ըզնա ած յԵլեադ.
Աղգ որ 'ի յերգըս զակատեալ և 'ի կայթ,
Եւ 'ի խաղուց և 'ի տաղից 'ի խընդիր
Խորատուզեալ յերկարաձիգ 'ի թըմբիր,
Գեղարուեստից տայր զակն և զունկն իւր 'ի նուէր,
Ի յԱպելէս և 'ի Ակոպաս 'ի Հոմեր,
Անտես ըզհրաշս արար զերկրի և զերկնի.
Եւ գուն ուրեք 'ի սոփեստից իսկ անտի
Ակընկառոյց ընդ այնոսիկ եղև ոք.
Հռովմայեցւոց իսկ զայնցանէ չեղև հոգ:
Զեպիկուրեայ Լուկրետ զիւրոյ գիւցազն,
Փոխան բնութեան, երգեաց ըզցնորըս նորին:
Փառասիրացն 'ի մըրցանակըս զինուց
Քան 'ի հերմեան յաղթանակել պերճ 'ի զրոյց,
Քաջամարտիցն արուեստս որդւոց Արիսի
Եղև ևեթ տիրապետել աշխարհի.
Ոչ զօրեցին գիտութեանց փառք գերապանծ
Գրաւել ըզսիրտ աշխարհակալ քաջազանց.
Արփին յալեա երեկոթեկ ըստ նոցին.
Գըմբեթն՝ ոյր շուրջ հիմունք 'ի ծով խարըսխին,
Աստեղափայլ ընդ խորանաւն 'ի պարոյր
Ծածկէ զայերս և զտիեզերս ընդհանուր.
Եւ արևորն Ովկիան հայր աշխարհի,
Շուրջ ըզխոնաւն ածէ ըզմեօք զիւր գօտի:
Այսքան նոցայն էր զարգացումն աւասիկ,
Մինչ մոլեգնեալ պատերազմունք ամենիք,

Բարձին 'ի սպառ ըզյոյս ըստոյգ գիտութեան։
Հռովմ արկար առ յոյժ իւրոյ մեծութեան,
Դրժուարութեամբ այնուհետև ընդ երկիր
Տարածանէր շըղթայս և զուռ իւր 'ի կիր.
Ընկճեալ ընդ խուռն բազմութեամբ ըստրըկաց,
Կայսերական իշխանութիւն իւր ստրկաց,
Թէպէտ և յեց կըրկնապատիկ 'ի նեցուկ։
Եւ Հերուլեայ աշխարհակալ ընդ զինուք
Զգեանեալ գահոյք ինքնակալացըն կործան
Առ կայսերաւն Աւգոստուլեաւ մինչ անկան,
Ի յանկմանէ նոցին գղրգեալ 'ի հիմանց
Սատանեցան յայնժամ գահոյք Կոստանդեանց։
Ըզսարակինս աղխապսեալով իւր ըզհետ,
Հին ահեղին պետութեան գոռն արկ գենպետ,
Զոր ընդ այլով անուամբ ահեղ ևս հաստատաց
Աղգ, զոր յիւրոց ժայթքէ Եւքսին 'ի Ճահճաց.
Յորմէհետէ խրոխտանայն երկրորդն իւր Մահմէտ
Մահկին պարծանք, ոսկերաց ահափետ,
Զինուք ըզմեծն արար Բիւզանդ շանթահար։
Ո՞վ դառնաղէտ օր և դըժնեայ պատահար,
Յոր խուժադուժըն հար ընդ գանձըս փարթամ,
Ընդ հին աւանդըս մեծարեալըս ցայնժամ,
Զգաղանային վրէժխնդրութեանըն հըրդեհ,
Ի յաւերածս ըզզօրութիւն ցուցեալ վեհ։
Թէ զապարանըս գեղանիս գու ըզմեր
Այրեացաւերս յաղթոյզ յաձիւն գարձուցեր,
Աւ ինչ ըզնոյըս մատենից ցանկալիս
Այրես 'ի վիշտ մեր ի անգութ 'ի յաղիս.

Եթէ ըզձից քոց ձեռընտու և ստատար
Նըսեմասուսեր արգիտութեանն է խաւար,
Զի երկընչիս, ասիրէ իսկ նա ընդ հանուր
Յորչափ ոսոխն իմաստութեան անհամբոյր
Մակացութիւնն այն հնարագէտ արուեստին
Մըթագնելոյ ըզվարժապետ խաւարին,
Ներակըրթէ իւրոցն 'ի վարժըս գըրեանց
Ըզվարդապետաբն զոյնոսիկ գերապանծ,
Որք 'ի ձեռնարկ երկոայրաբան գուն գործեն
Տրոհել ճշդիւ ըզվերացեալն 'ի թանձուէն։
Թըշնամանաց այսքանեաց, միաբ բանաւոր,
Երբ վրէժխընդիր ոք յարիցէ քեզ հըզօր։
Կուսականաց հանգէս բառից այնքանեաց
Զրգեալ զարմանս 'ի շրջից յինքն 'ի ծագաց,
Մինչ կայր բնութիւն համայն անաեռ անզընին,
Խընդիր շահու զմեզ ած յայնժամ մերձ ներմին։
Աղգ գենուացի ոմն աւասիկ առնէ մեզ
Լուր նորահրաշ, զի է հեռի յաշխարհէս
Միւս ևս աշխարհ, և զի բնակէ անդ որեաբ
Անփոյթ զոսկւոյ. անդր հատանեմք 'ի յաւաբ։
Որ ինչ և մեզ իցէ խրատոյս զառաջեաւ,
Այլ իբր յանգուանդըս մըխիցեմք գիմագրաւ.
Զորդն 'ի յանկեան կըռուեալ 'ի բնիկ տերևոյն,
Ճիգն որպիսի՞ մըղեսցէ զնա հեռագոյն։
Ըզխանդուսմանդ 'ի թռիչըս գէպք կացուցին.
Պիչ 'ի բևեռն կոյս յայանեաց նա գիտին
Ըզնեղակարծըն խանդ՝ որ մեզ աւեաչեայ
Իսկ իշխանացըն գոյր գուժկան Պերովայ։

Ծածկեն մայրիք մեր ծովածուփք զալեաց ծոց,
Եւ զմեզ հանուրց քաղաքացիս կողմնացոյց
Կացուցանէ տիեզերաց վաղընդփոյթ.
Եւ զերկոցունց առ հասարակ մեզ 'ի մուտ
Ընդաւակայս բանայ զԼընդկաց զառաջնաւ,
Ուստի ըզգանձս առեալ ածեմք համագրաւ:
Քանի՞ դանդաղ և քանիսն յամրագնաց
Մահկանացուացըս զարգացումն է մրտաց.
Ազգ ազգ էից և հոյլք բուսոց և մրրգաց
Զկեանս ուր ուրեմն զարթուցեալ խուզարկուաց,
Երկնից զերկիրըս վերածեն 'ի զընին.
Դարձեալ և ասա գէպք վարժապետ մեզ լինին:
Երկրն մոխրոյ, խուն աւազոյ ինչ զանգուած,
Հանգէպ միմեանց զեռեղեալ զոյգ ապակեաց
Ի մանկրաւոյ 'ի ծայրըս նուրբ խողուակի,
Առնէ յափանցրն Զելանդայ լրսելի,
Ո՛վ նորահրաշ զարմանք. չբքնա՞ղ երևոյթ:
Զարթնու 'ի լուրն եարուրացին հնարագիւտ.
Եւ 'ի սրագոյն զինեալ 'ի բիրս աչք նորա,
Ընդարտամեան ջաղխեն զերկինս ապակեայ,
Բեկանն կամարք, փոփոխին կայք ընդ եթեր.
Ի դատակնիք Գալիլէի անվեհեր,
Տեղի երկիր 'ի կեդրոնէ տայ 'ի բաց.
Եւ արեգակն 'ի յանդորրու մրշտակաց
Տիեզերաց առ հասարակ միջակէտ
Իշխան տուընկնան անդրդուելի կայ և պետ,
Տեսանէ շուրջ զիւրև զերկին պարագիր,
Տեսանէ շուրջ զիւրև և զինքն իսկ զերկիր:

Սրրբաբերնին 'ի զուր առեանն անաչառ
Մոլորութեան դատի զնորին գոլ բարբառ.
Եւ վեցամեայ զուր պատուհաս բանտարգել
Ի բրռնազբօս հնարի 'ի զեղջ ըստիպել
Ընդակուցօղ դրրիցն ըզհէքըն վրկայ.
Մինչ անդադար 'ի գնացս երկիր պարագայ
Զաթիւ և զդիշեր առեալ ածէ զիւրովին
ԸնդԳալիլէ և զդատաւորն ընդ նրմին:
Քանի՞ բնակիչք նրանմբ նորոյ աշխարհի,
Մեծրդ Ռոմիւր, դան քև 'ի տիւ լուսարփի.
Առ ի՞նչ անտես ծածկէ 'ի խոր ըզուութեան
Ազգ մի ողջոյն ըզհրաշս էին 'ի յինքեան.
Նա անծանօթ 'ի սպառ աչաց մերոց գոյր,
Թէ ոչ մատչէր գոյզն ապակեակ 'ի նպատաստ իւր:
Որ տեսուչ զակն ըստեղծ մերոցըս քայլից,
Ոչ 'ի տեսիլ բնաւից մեզ զայն ետ էից.
Եթէ ընդ ամպս, ուր էգ ըզդահ իւր Աստուած,
Վերագիտեմք իւրոցն 'ի խոյզըս գազանեաց,
Որպիսի՞ աչք կարծեմք թէ բնաւ իցեն մեզ,
Առ 'ի սրանալ ընդ բարձրաբերձն աստարէզ.
Որդն երկրածին, խոնարհեցս զակրն քո,
Մի քան զերկիր զայն ամբառնար 'ի վերոյ:
Այն ինչ ահա գեղ իւր ցայն վայր անծանօթ
Բազմապատիկ 'ի հրաշս յայանէր ընդ աղօտ,
Համայն ուրեք խրնամբ նոցին 'ի խընդիր
Ըզբարեբաստն զայն ծրնան ըզձանձիր
Ընդ վէճ սնոտի, զոր Սատգիրեան դիւցազն այն,
Թառնաձայնիցըն գրպրոցաց նախիշան,

Արծարծանէր 'ի հակաձառն գրգիռ.
Մինչդեռ բնութեան ազգէր թափուրն արհաւիր:
Սակայն խրախոյս է մեզ, ծնանի արդ արև.
Առցուք խորհել. Կարգեսիոս գայ յերև:
Կեայ նա 'ի մթան, այլ լուսափայլ երկք նորին
Ընդ աշակերտս հանեն ուսիրս նրմին.
Առ 'ի նմանէ երկաքանչիւր համբէն
Ըզփառս իւրեանց 'ի կիր առնուն և ըզզէն.
Նա և յաղթողք իսկ շնորհապարտ գոն նրմին,
Ժառանգելով ըզյաղթանակն մարմին:
Մեզ անդրագոյն եւս ոսրնփոխ լինել արդ
Յառապարիզն չէ իսկ և չէ ինչ անմարթ.
Այլ ընթանալ ընդ այն զիաՀրդ գոյր հընար,
Եթէ ոչ ինքն մեզ հորդէր ճանապարհ.
Թէ ոչ նա լոյս 'ի Գալիլա էր ծագեալ,
Ի՞նչ Անգլիոյ էր 'ի Նեւատն իւր պանծալ:
Միաք մարդկեղէն, ում նոքա փառս յաւելին,
Ըզմեծութիւն ուսաւ նոքաք զիւրոյին,
Եւ 'ի նոսին իսկ նրկատեալ զայն ծանեաւ.
Այլ 'ի նոցին յարատաահման 'ի յարշաւ,
Տրկարութեան իւրոյ եղև խնամուտ:
Կարգեսիոս նախկին 'ի ներքս եւ ինձ մուտ
Յառատուածային խորհրդարան անդր ընդ իւր,
Ուր աշխարհի արարչութեան կարգ կազմիւր:
Ի խորանարդ շինքակուտէ անդ նիւթոց,
Որ էր էիցս համագոյից որորոց,
Տարերք երրեակ այլայլաձևք եղանեն.
Բնկատեալ անկիւնք նոցա յիրեար շրփմանէն,

Այն ինչ հատաւիշն՝ յորմէ համայն ինչ շարժին՝
Շերջան նիւթոյն ասայ ընդ այերքս նախկին,
Ի լուսափայլ և նուրբ փոխին 'ի փոշի:
Ոչ այապիսի ինչ նրկատեալ նեւատնի,
Տեսանէ նա կամ տեսանել նրմա թուի,
Շարժել մարմնոց գատարկութեան 'ի մեծի,
Իշխել միմեանց, ձրգել յինքեանքս զիրեար,
Մինչդեռ 'ի նոյն օրինաց բնաւք իսկ ձրգեալ,
Ի միջակէտ անդր 'ի հանուրցս բերին:
Եւ ո՞ երբէք նրկարագրել ըզնոցին
Կարէ զմբրցանս 'ի միջակէտ գիմեցման,
Որոց բնաւին անհաւասար է իրան:
Հերքեալ ըզմէգն յաղթանակաւ գրահաշիւ,
Ըզնրսեմաւրս շուրջ պատեալ ըզվրհիւ.
Նա ըզդիւցազն իւր բարձր 'ի գլուխ կանգնեցոյց,
Քաջայանգուգրն համարոցն իւր 'ի ցոյց:
Դուք զարս հատաւին համագոյից գերագոյ
Մարթէր արդեաք, մինչև ածեալ զայնս 'ի գոյ,
Թորհրդակիցս ըզձեզ 'ի նոյն հրաւիրել,
Թէ առ վայրկեան ինչ սուզ իցէ ինձ իշխել,
Ի վառատակոցդ՝ որ յոյժ քան զիս են վրսեմ՝
Ի բաց ըզմիաբս ձեր քեցել, հարցանեմ.
Ո՞ր աենչ մրզէն անդրէն 'ի վայր 'ի յերկիր
Ընդեռն ընդ օդս 'ի վեր ձրգեալ ծանրակիր:
Պատասխանեք թէ ծանրութիւն. այլ այդ բառ
Ձրգնե ըզձերդ իսկ աղմրկեալ ըզկաձառ:
Բացատրեցէք ապա դուք ինձ գոնեա զայդ,
Որ ինչ 'ի ձեզդ ներգործի անընդհատ:

Այն ինչ զրաւեալ քո զձաշ, յումմէ գարձեալ
Աներևոյթ մըղի 'ի ծոց քո հանգարտ. [մարտ,
Ո՞ր քաջայաղթ մարտիկ հասեալ այդր անգէն,
Տիրէ նուաճէ լեռու զձաշեալըդ պարէն.
Որ 'ի յաւիշ փոխեալ ընդ հուպ յանուշակ,
Ի յերակէ ընթանայ շուրջ 'ի յերակ.
Եւ 'ի շրջանս անդ իւր խառնի ընդ արեան,
Որ զհետ իւր միշտ և ցանկ առեալ ձրգէ զայն:
Ի՞ր 'ի յայլուստ ուրեք գարձեալ 'ի մարտի,
Որ ոչ մերոցս է նուազ ըզձից սիրելի.
Դոյզն ինչ կեղև ախտակրելոյ յոյս հիքին,
Դիմէ յաղթէ և շրջթայէ զթշնամին.
Որ մերթ մոլեալ և մերթ անկեալ 'ի թըմբիր.
Առնէ զինուց գուլ 'ի կարգեալն օր 'ի նիրհ.
Այլ 'ի ցատմանն աւուր անվրէպ 'ի զարթնուլ.
Արծարծանէ 'ի մեզ գարձեալ նա ըզհուր.
Բոցք 'ի յաչաց մերոց ցայտեն և շանթիք,
Եւ նուրբ ոգւոց 'ի մեզ գրրոհ շրջմոլիկ
Գնայ զարտուղի. և ստերիւրեալ նայտակէս
Անյուշ անձին թափառին միտք մեր 'ի մեզ:
Ըզսուր 'ի վեր զայնու ահեղ աղմկաւ
Բառնայ օրհաս, կազմ և պատրաստ առ 'ի ցաւ.
Զոր արհաւիրս և որպիսի՞ գրժընդակ
Ոչ խափանէ աղէտս այն գոյզն փոշեակ:
Բարձր ըզկարգաց խնայեա զիրենգիրս առ 'ի քէն,
Թո՛ղ անդր ըզձառրս պերձ՞ որ ոչ ինչ պարզեն.
Զի՞ գու զ'խապառ տրգիտութիւն քո ժրխտես.
Ա՛ռ, գաղանիք են բնուք 'ի քեզ և բնուք քեզ,

Եւ տակաւին խընդրես մըրդուզդ արարած
Գոլ խորհրդոց իսկ արարչին խորագոյց.
Ուր և ըստուրկն հոգւոյդ մարմին քո անարդ
Գոչ անթափանց քեզ ըզդաղանեաքն իւրովք արկ:
Թէ զհաւատոց շնչուցանեմ ես ըզքոյ,
Անձամբ անձին պեղեմ ինձ վիհ առ 'ի սահ.
Խոր զաստուածեանըդ շուրջ պատէ զքեզ գիշեր.
Եւ թանձրագոյն քոզ ըզքնութեամբ գու արկեր:
Նա ինձ աքսոր ժամանակեայ 'ի տեառնէ
Ըզկենցաղոյս չափեալ սահման յայտ առնէ.
Իսկ զինչ. աղէ. լեցի նա քեզ թեքագիր.
Թէ ոչ պատժոց է սահմանեալ վայր երկիր,
Ի՞ր 'ի տեսիլ այնուհետև հաստուածոյն
Զարմանայցես գու ընդ հատաչին զօրութիւն:
Մոլեալ ժանտախտ ածէ զնովաւ աւերած,
Սասանութիւնք գուժեն ըզսատ հրդեհաց.
Խամրէ ձրմեռն և լափլիզէ տօթ ըզնոյն.
Եւ ազատից նորին ածեալ ըզլրուն,
Ապախտ էակն առնէ ըզնա բանաւոր,
Այն որ 'ի խնամս նորին լեալ թագաւոր,
Ում հրամայել բնաւից էր անկ և պատկան.
Եւ առնել այդ հանուրց, գիտել զամենայն,
Նա 'ի վիճակ իւր աւանիկ 'ի տրխուր
Անկեալ գընի իրր ապիկար իրր ըզկոյր,
Անգութ տխտից հէք և թըշուառ խաղալիկ,
Անզօր զրմրոտան առ 'ի նուաճել ըզատիկ,
Եւ օր նրմին ոչ ծագեսցէ հանգըստեան,
Բայց 'ի ծագել մահահրաւէր տրուընքեան:

Սպառէ նրմին բախտի վիճակն իսկ նորուն,
Համայնածախ լուծցէ ըղնա բոց յանձիւն:
Խորհրդակիցդ հաստչին ուստ ինձ ազէ,
Հիմ զոր արարն՝ յոգդոզդ կամաք եղծանէ,
Ո՞չ անթերի ստեղծ նա զաշխարհս ամենայն.
Թէ ոչ կարաց, զարմանալ ի՞նչ է արժան.
Իսկ թէ կարաց և ոչ առնել կամեցաւ,
Ի՞նչ արարիչն այն սիրելի իցէ բնաւ:
Դու որ պարծիցդ տեսանել զամենայն:
Զուր փեռեկել ջանաս ըզքոզըն խաբեան.
Լիցի սպասել ինձ մինչև ինքն իսկ Աստուած
Վերացուսցէ յաւուր միում զայն 'ի բաց:
Նա աւանիկ շատ իսկ է ինձ զի կրանք զայն
Այժմէն 'ի վեր առնուն առ սուղ ինչ վայրկեան.
Շատ իսկ տեսեալ անդ՝ 'ի տեսիլ զայն քեզ տաց,
Աւ 'ի սփոփումն համայն սրբոյն և մրտաց:
Փառաց հաստչին և մեծութեան Ճահաւոր
Տիեզերացս այո՝ բնաւից պարտ է գոլ.
Տաճար նորին են տիեզերքք, և 'ի սմա
Կարգեալ 'ի տպատ նորին է մարդ պաշտօնեայ.
Համբ է տաճար անչուն՝ ուր չիք քահանայ.
Համագոյից պարտ է 'ի ձեռն սոքա
Արարչագործ նուիրել ձեռինքն պաշտօն,
Եւ զգոհութեան մատուցանել նրմա ձօն:
Այլ 'ի կարգոյ լեալ պաշտամանքն վախճան,
Տապալեցաւ կարգն այն անկաւ 'ի կործան:
Մինչ ապաշնորհն ըմբոստացեալ պաշտօնեայ,
Թըշնամանեաց զայն որ ըստեղծն իսկ ըզնա:

Եղծաւ բնութեանն յարմարաւոր յօրինուած,
Լեալ պատժակից երկիր նորին յանցանաց.
Խաւար մրտաց, միտուն 'ի մեզս և օրհաս,
Իւր և որդւոց նորին եղև պատուհաս:
Սակայն թէ չև էին որդիքն 'ի միջի,
Ի՞նչ ընդ նրմա պատժէր զաւակն ապառնի...
Յորժամ հաստիչն հարկանէ զիւրն ըզհատուած,
Իցէ՞ զնորին չափել մեզ անկ ըզհարուած.
Եւ գիտիցես դու ազէ ով մահացու,
Զինչ գերագոյն Էին է պարտ և անգու:
Ոչ ևս երկիր էր նրմա գրախտ փափկութեան.
Սակայն վերջին պատժոյս մերոյ դահիճն այն
Մահ, որ 'ի լրումն ածէ զայն արդ անգանգաղ,
Թրուէր խնայել ընդ ջինջ երկնաւն 'ի մեզ վաղ.
Այլ յամրագոյն գիմել նորին յիւրըն զոհ,
Յաւել զեռանդն եղեռնութեանց 'ի մեզ, ո՜հ:
Հար միւսանգամ երկին ըզմերս օթեան,
Եղծ զերկրաքարշ ըզձից մերոց ըզկրաւեան.
Ի հարուածոյ անսի սարսեալ գունդ երկրի,
Յանդընդախոր կայր 'ի հիմանց յերերի
Խոժոռագէմ շուրջ բիւրաւոր 'ի տեղիս,
Եւ ամենուստ բերեալ զիւրև ամոյիս,
Եռեալ բացեալ վրհեան 'ի ծոց իւր անչուք,
Պարածածկեալ խըձիւք քարամբք և ժայռիւք.
Մըրրկածին զիւրև ամպրոպքս նրսեմ
Ի ժանտ շոգեաց եռեալ ծրխեալ երկնաձեմ.
Հոգմք զայրագին և խառն 'ի խուռն եղանակք
Մատուցանեն մահուն ընդդէմ մեր վրէժակ.

Հեծէ բնութիւն ազատութեան 'ի յանձուկ
Ըղվըշատլից յաւխանիւս հէք ըսարուկ.
Հըպատակեալ յանցաւորին բըռնադատ,
Յոգւոց հանէ զանխուլ 'ի մէնջ և անյայտ։
Այո՝ աքօղեալ ծածկին 'ի մէնջ էքս համայն,
Մինչև յահեղն և յանհրաժեշտ 'ի վայրկեան,
Յորում եկեալ Աստուած ընդ ամպս յերևոյթ,
Թօթափելով զասատեղս յերկնէ շիջանուտ,
Մագեսցէ ախ. լիցի սըրբոցն իւրոց լոյս,
Այն որ նոցին գարուց 'ի դարս եղև յոյս։
Թիստ ընդ նոսին իսկ վարեալ ատտ 'ի ստորև,
Մերթ երևի և մերթ ածեալ ամպ զիւրև,
Ածէ զնոսա նըստեմատուէր ընդ խաւար,
Զորըս կորոյս անապարծ երբեմն հանձար։
Զի բոզբէս, ասէր է նա ինքն և իշխան
Ըզլոյսն 'ի բաց բառնալ 'ի քէն զիւրական.
Եւ եթէ ոչ թագուցանէ զայն 'ի սպառ,
Ողորմութեան նորին շնորհք են անձառ։
Որ զք խընդրէ զայն, հուպընդհուպ ըզնորին
Ըզգայ նըշոլքս թափանցիկս 'ի յանձին.
Իսկ որում ոչն է փոյթ 'ի խոյզ 'ի խընդիր
Գտանել նա զայն յուսայ 'ի զուր 'ի նանիր։
Զաղետալից ըզկենցաղոյս այսորիկ
Այսպէս պարզեմ ես ըզխորհուրդ աւասիկ.
Բայց հիացումն ինձ գուութն ածէ հայրենին
Յեռեալ ընդ ասատ զայրացելոյ արարչին.
Եւ ամենայն ուրեք ինձ յակն անկանին
Իշատութիւն խառն ընդ քաղցրութիւնըս նորին,

Պատիժ ընդ վարձ, և լոյս խառնեալ ընդ խաւար։
Թէ առատպէլք կրօնքս այս իցեն և մոլար,
Անխուսելի լարեն, աւա՜ղ, ինձ ծուղակ.
Շըղթայաձեւն յօգ, կարգ և լոյս գերուեալ,
Եւ միութիւն գիտման՝ յոր նա ունի ուշ,
Ինձ զարմացումն ածեն, կըրթեն զիս յապուշ.
Քանիք յանկարծ գաղանիք ծածկեալք 'ի մըռայլ,
Յայտնին ինձ ատտ, գան 'ի տեսիլ լուսափայլ.
Նախանըկար ցուցեալ 'ի հնումն օրինակք,
Մարգարէից գունդ և պատմիչք և վըկայք,
Հաւատք և Բան աւանդութիւն և մատեանք
Միաբանին, միմեանց 'ի ձահ գան համայնք,
Կենդանաւորեալ յար Ճըշմարտին և Նըման
Մոլորութեան զիւրն ըզպատիր կերպարան։
Աղէ՝ ասա ինձ ատատուածեանդ, և ո՞ր այն
Շուրջ կաչկանդէ ըզքեզ հանձար հրաշազան,
Յորմէ և գու ինքնին պարտիս ամաչել,
Պարտաւանդեալ անխուսելի և անել։
Թէ Աստուածոյն քո չէր իսկ փոյթ ինչ ըզքէն,
Սակայն զիւրոց նըմա զփառացն էր օրէն
Անտես առնել ըզթըշնամանս, և տալ թոյլ
Մոլորութեան ըզՃըշմարտի գէմս առնուլ,
Եւ զեղծանել անուամբ իւրով առ 'ի զմարդ
Ի խուժադուժն իւր արկանել 'ի թակարդ.
Նա՝ աւանիկ մոլորութիւն այդպիսի,
Ի խանձարրոց իւրոց այդքան իսկ հեռի,
Հաւատարիմ զի՞ արդ 'ի տար լեալ յաշխարհ,
Ընդ ամենայն աեղիս տիրել զօրանայր։

Մինչ 'ի Թուլէ 'ի Մէքսիկոն 'ի Ցապոն,
Մինչ 'ի Ցաւա մինչև 'ի խորքն Լապոն,
Մինչ 'ի գըժկերպսըն Հոռենտոռաս զիւրեանց
Լուցին քարոզք մեր բոցավառ ըզնախանձ.
Եւ ամենայն ուրեք հոգւոց 'ի սատցուած
Արշաւասոյր հասին նոքա տարագնաց,
Ցաղթօղք գերեացն իւրեանց եղեալ սիրելիք.
Ո՛ առասպելք առ 'ի հրապոյրս երջանիկք։
Եթէ յանկարծ 'ի գետափանցրն Գանգեայ
Այսր 'ի յափունս երբեք մերոյս Սեկուանայ,
Ի նոյն ձրգեալք 'ի նախանձուէ՝ որ ըզմեզ
Ի փըրկութիւն նոցին ձրգէ անձկապէս.
Ըսպառազէնք Ճռռամ Ճառիւք Ճարտասանք
Դիմեալ դային կաճառք քրքմաց Տալապեանք։
Ընդունելի ըզՍամենկոա իւրեանց մեզ
Քարոզութեանցն իւրեանց առնել 'ի հանդէս,
Եւ կամ թէ նուազ քան ըզնոսա անրմբոնք
Հատարակաց մըտաց՝ Տեւրիչք խըստակրօնք
Գային առ մեզ բարձեալ զուրան 'ի ձեռին,
Մարգարէին իւրեանց քարոզքըն մեծին,
Տալ որոտոց Ճառիւքն առնուլ մեզ 'ի միտ
Զի իցեն գենք իւրեանց հաւատք Ճշմարիտ,
Զո՞ր իսկ 'ի մեզ հունձս առաքեալք այդպիսիք
Կարօղ էին բանիւքն առնել խարուսիկ.
Սակայն աղէնք ահա նոցին հրապատակք
Եղեն մերոցըս քարոզչաց ընդունակք։
Ատուած մերովս կերպացեալ կուռածին,
Ատուած ազգատ և վերջատկիր 'ի խաչին.

Ատուած մեռեալ և յարուցեալ տիրապար.
Զինչ հրամայէ նոքօք՝ բայց ողբ և աշխատ։
Ի պերճախօս Ճառից թերևս 'ի նըշոյլ
Եղև նոցա զՃենն 'ի բագնաց արգելուլ.
Զո՞ր ապարիզ Ճարտասանին ընդ առաջ
Ա՛ 'ի խրախոյս բանան մըսուր գոմ և խաչ.
Այն որ կանխաւ գայս ամենայն գուշակեաց,
Սոցին նոյն ինքն է ներգործող սքանչելեաց.
Աղգք և ազգինք և տիեզերք համբրեն
Ի պատգամաց նորին 'ի լուր գիմեացեն.
Լիցին օրէնք իւր սրբրազանք լըսելի,
Հրատարակեալ մինչև 'ի ծագս աշխարհի։
Բարձեալ և ես յօժար 'ի յուս իմ բերեմ
Ըզլուծըն զայն փառաւորեալ և վըսեմ.
Գերեմ ըզմիտս իմ, այլ բան ինձ լուսաձիր
Ոչ ինչ 'ի նմա գտանէ մըտացս հակակիր.
Կըցորդեալ ջահ նորա 'ի ջահ հաւատոց,
Մագեն համայն ինձ երկոքեան պայծառ բոց.
Մարմնացելոյ Բանին երկիր պագանեմ,
Երկրպագելոյ Բանին զհաստիչդ իմ օրհնեմ։
Փա հրամանաւ 'ի յահարկու յոյսընչէն
Գոյացեալ էքս առ հատարակ ելանեն.
Քեզ և 'ի քեզ են կեանք, և զինչ առանց քո
Զիցէ մեռեալ կամ մահական կամ անգոյ.
Իմաստութիւն անբաւ, հըզօր զօրութիւն,
Ո՛յր համագոյք են գործք ձեռաց քոց, և նոյն
Բան և պատկեր քումդ Էակցի բարձրելոյն.
Որ ընդ մերով կերպարանաւըս թագուն,

Յորժամ յաշխարհ երևեցար 'ի ստորին,
Զ Աստուածդ ըզմեծ ոչ ծանեաւ մուրթ խաւարին.
Իսկ արդ մինչ յայլս մեր ծագեն փառք քոյին,
Եւ տիեզերք 'ի լոյս կրօնից քոց ծածկին,
Ոգիք գոռոզք արբեալք 'ի սուտ գիտութիւն,
Ակնախնդիր Ճառագայթիցդ 'ի շողիւն
Շլացեալք՝ առնեն 'ի քեզ հայել իսկ ապախտ.
Եւ զինչ զարմանք իցեն ընդ հեք նոցին բախտ,
Զի զքեզ նրսեմ երբէք խաւար մի տեսցէ,
Կոյր 'ի Ճառնչ արփւոյն որ զմեօքրս ծագէ,
Շերջապատեալ 'ի նշշուլիցն պայծառ,
Կայ և մընայ 'ի գիշերի անդ 'ի սպառ:
Զուր զինքնակաց Էին անմիտքն խօսին.
Ի՞բր իսկ նոքա, Բանդ էակիցդ նորին,
Աւանց շնորհաց քոց զոյն կարեն նրկատել.
Բարձ ըզնոսին զաչացն ըզխոչ և զարգել,
Զի ոչ բաւեն տաղք իմ բառնալ զոյն 'ի բաց.
Փոխեա զնոցին ըզյամառութիւնն մրատաց:

Այլ մինչդեռ ես վասրն նոցա պաղատիմ,
Հարկանէ զխիղճ մրատաց վրձիռ քոյին զիմ,
Որ դատապարտ զըմբռատն առնէ անօրէն,
Որոյ շրթունք պիղծք յաւակնին ինքնօրէն
Պատմել մարդկան առանց քոյոյ հրամանիդ
Զօրէնքս քո և ըզհաւատ Ճշմարիտ:
Պա՞ռա իցէ ինձ վասն օտարաց առաւել
Եւ ոչ վասն իմ աղերս առ քեզ արկանել:

Մինչ ամպարիշատ առնոյր անդրէն վերըստին
Անկրօնութիւն զէն 'ի զայրոյթ մոլեգին,

Եւ տապանակըն սուրբ եղեալ 'ի վտանգի,
Զիս ընդ անկումն իւր կացոյց յերկիւղի,
Զեռնարկել յայն համարեցայ ինձ օրէն,
Առ անկործան ունելոյ զնա 'ի վտանգէն:
Ցանգըգնեցայ ստուգիւ, և ինձ առ 'ի քէն
Պատիժք թերևս պատրաստին փոխարէն.
Զախողակի նախանձ կրօնից յիս ըզքոյդ
Գըրգռէ թերևս ընդ իս ըզսատ և զայրոյթ,
Մինչ ստատնեալ սիրտ իմ զանի հարկանի
Վասրն փառաց քոց և փառացդ հայրենի:
Ահ՝ զոր արժան էր հաւատոց 'ի յիմմէ
Ի սպառըսպուռ մերժել 'ի բաց 'ի սրբոյ.
Զի նրպատից մարդկան դու չես ինչ կարօտ
Առ 'ի զքոյին պահել ըզփառս անաղօտ:
Մրընչեալ իշխանքն զբժոխոց առ զայրոյթ,
Տացէ հարուածրս գերապանծ շինուածոյդ.
Բայց տապանակն այն Աստուծոյ կենդանւոյդ
Զանկցի երբէք և 'ի յանկմանն երևոյթ:

ԵՐԳ Զ.

Ոչ ոչ, վրսեմն այն խորհրդոց սրբոց մեզ
Զառնել յամոթ ըզհրաշութիւն իմ երբեք.
Գերագունին գերեմ ըզմիաս իմ Էին,
Եւ ոչ իշխեմ վիճել երբեք ընդ նմին.
Զի զԱստուծոյն ինձ ո՞ երբեք կարասցէ,
Եթէ ոչ ինքն Աստուած պատմել զինքենէ:
Ի մեայլ ամպոյ ծածկի 'ի մէնջ նա անտես,
Այլ ակներև նշոյլ ինչ խուն թողու մեզ.
Զինչ ևս իցեն ինձ պէաք, վրսասահ առեալ ՀՇեմ,
Գոհ ընդ նշոյլն՝ երկիր ամպոյն պագանեմ.
Զի նա ասաց. գաւանեմ զայն անեղկբայ,
Բանն իմ աեղի բարձր 'ի կարծեաց իւրոց տայ.
Եւ խոնարհել առ գարշապարս արարչին
Միաք իմ ոչ ինչ իւրեանց ամոթ համարին:

Սակայն ընդէր ոչ հաճ ընդ այս նրբէր մեծ,
Կամի Աստուած զի անձնատեաց իսկ եղէց.
Սիրեմ ես զանձն իմ, և ընդէր իցէ ինձ
Բուռն ընդ անձին իմում սուսեր 'ի ձեռինս
Իջանել յար մինչև 'ի խորքս սրբոխս:
Եւ զարնկակից խլել սիրոյ զարմատս յիս.
Զոհ բազմազէտ, մարտ անողորմ և երկար:
Նախանձաւոր բարւոյն՝ զոր ինքն իսկ արար
Վասն իւր ևեթ, կամի զի ինքն միայն
Երերական սրբութիւս իցէ յենարան:
Իցեմ այսքան ինչ նախանձու արժանի.
Ոչ մեծութեանց, ոչ փառաց իզձ վայրենի
Յափշտակել 'ի նմանէ զսիրս իմ կարեն,
Զոր միայնումն անկ է գրաւել համարէն.
Ընդ այսպիսեաց անարդ վարձուց իցէ պարտ
Գոլ պատշաճիլ անձին ոտոխ գիմամարտ:
Սակայն ընդ սուգ ինչ բերկրանաց փոխարէն,
Որ զպատրելոյ սրբոյն զծարաւ ըսփոփեն,
Իցէ արժան ինչ հաւատալ զի այդպէս
Դառն 'ի զայրոյթ բորբոքեսցի նա ընդ մեզ,
Առնել ընդ գոյն ինչ զոք մեղու մահապարտ:
Գիտեմ գիտեմ զի բաժանել ոչ է մարթ
Ըզսէր, զոր ինքն պահանջէ բովանդակ.
Սակայն նորին է գործ բնութիւնս իսկ համակ.
Եւ ընդ այդքան մինչ ընդ չարիս համաբուն
Հիւսես ըզկուզս ինչ ըզբարեաց ի բնութիւն,
Մինթէ պարգևք քոյին չիցեն նորին ձիր:
Քոց անկապուտ բարեացդ ևեթ 'ի խընդիր,

Ա՛ սիրելիս գերահրաշակըս քոյին
Ահա գիմեմ լրսել զիմատարս նոցին։
Հեշտականաց անօրէնն ախտից անուանի
Զուր 'ի հանգէս ածէ փարթամ կարասի
Ըզհանճարոյն իւրոյ. զի մարթ ինչ իցէ
Վարժել յարուեստս երանութեան 'ի նմանէ,
Որ յայլ ինչ ոչ է աջողակ բայց ևեթ
Ի սպառնալսպուռ անձին իւրոյ գոլ անդէտ.
Եւ որ անխռով 'ի կրից եղեալ 'ի բացէ
Ըզնախահոգ ըզգուշութիւն 'ի յանձնէ,
Ըստ դիպուածոյ համարի կեալ 'ի կեանս յայս,
Ըստ դիպուածոյ և ըզմահուն իւր օրհաս։
Ինձ տրրամութիւն ազգէ քերթողն անտրխուր,
Զի փոյթ է ինձ ընդ ոտնառեալ ալիս իւր.
Նրմա իւրոյ թշչուառութեանցըն ձանձիր
Զաւեշտական տալցին եղեն թեշլագիր.
Նրկարագրէ ըզբերկրութիւն իւր նա ինձ,
Այլ ես 'ի զնին կամ անդ իւրոցն աղեսից.
Եղանակէ զտարփանս 'ի նուազ ինձ 'ի ձայն,
Եւ մեղկօրէն խընդրեալ զանուս իւր Մուսայն,
Արհամարհէ զմահուն ըստեպ ինձ զօրհաս.
Թէ չերկընչէր անոի, խոտէր զայն նրւազ։
Դուք աշակերտք Պետրոնի յոյլք անուանիք.
Մահկանացուք գոհք, կարծեցեալք այնպիսիք,
Ի զուր պարծիք վարել կենցաղ անաղրատում.
Մի նախանձորդ կարծէք բախտիդ զիս ձերում.
Աւա՛ղ յաւուրս իսկ ըզձակերաս 'ի սիրտ ձեր,
Ցորս աղխից առիթ Ատղիկըն սիրէր,

Ցորժամ պաշտօն մարդ հաճոյիցն իւրոց հար,
Ածեալ անուանքս զայնոքիւք թարմատար,
Ատուածարեալ զիւր կիրս հէքն և թշչուառ,
Ընդ վատութիւն իւր խմատուանքն պատկառ,
Խունկս ակամայ արկանէր զից մեղկութեան։
Հրապոյրք նոցին ձրգեն երբեմն ըզմեզ յայն,
Այլ բիւր աւա՛ղ ոյց ընդ նոքօք գերեալ կան։
Սակայն ընդհ՚ի իցէ ինձ կալ ախոյեան
Անհաշտ մարտիւ յաւէրժ ընդդէմ ոստիի,
Որ զինքն յանձախ ինձ ընծայէ սիրելի.
Ընդհ՚ի վայրիկ մի ընդ նրմա կալ անմարտ
Կացուցանէ զիս յանցաւոր մահապարտ.
Փրխատնեիցն ատատուած չիցէ՞ անհամբոյր
Ի պահանջիչն յինէն թողուլ վասն իւր
Լքքանել զանձն, և մրատգիւր տալ հրաժեշտ
Ցամենայնէ որ ինձ հանոյ է և հեշտ.
Հեզձուցանել յիս ըզբնութիւն, և գահիճ
Մարմնոյս հիքի գոլ որոյ ինքն է տրուիչ։
Եւ ո՞ր յիւրոցն իցէ ափոփումն օրինաց,
Որ երանէ զկեցեալն 'ի յողբ և 'ի լաց։
Այսպէս ահա մահկանացուն բարբառի.
Որ արտաքոյ ընդդէմ կրօնից մատառի,
Մինչ զարմանայ 'ի ներքս 'ի սիրտ իւր ընդ նոյն,
Ցապուշ հարեալ ընդ վեհ նորայն մեծութիւն։
Հաւատայ յայն, երկիր նրմա պագանէ.
Այլ յօրինաց սրբրոց նորին 'ի յահէ,
Անկեալ յերկրայս 'ի յարարչէն կայ յուրատատ։
Ա՛ռ 'ի մերժել զիշխանութեան նորին սատ։

Օ՜ն բեր ածցուք ըզյաղթանակս 'ի յամբոկ,
Մուտս 'ի նորին խընդրեալ 'ի սիրտ անողոք.
Հալածեսցուք զանկրօնութիւն 'ի նմանէն,
Կործանելով զիւր ըզվերջինն ապաւէն:
Թէ և յանդուգն իշխեմ կրօնից կալ ընդդէմ,
Սակայն զիարդ հեստել բանին կարիցեմ.
Թէ օրինացն ասատուածայնոց չեմ հաւան,
Օրէնք բնութեան իցեն ինձ տէր և իշխան.
Բեր ինձ ընտիր առնել ընդ լուծ և ընդ լուծ,
Եւ օրինացս ինձ այսոցիկ երկոցունց
Կացցէ անձին շահ գատաւոր 'ի միջի,
Նա ընտրութեանն իմոյ անօրէն եղիցի:
Տըկարութեանդս մերոյ բանն ախտակից,
Անշուշտ ըզպարտըս մեզ գիւրէ զպատշաճից.
Այլ մի 'ի հայց նոցին գնասցուք առ Գլատոն,
Թէպ Հոխատցի ընդ Սենեկա Կիկերոն.
Զոքա կարեաց մարդկան Հռոմ գատաւոր,
Ի պերճանաց քան խմաստից 'ի յորդոր,
Ոչ ըզբանին 'ի խիստ խրատանց 'ի մատեանս,
Այլ առաւել զիւրեանց խնդրին ըզպարծանս.
Ներոպագոյնք ասա Հառեսցեն վարժապետք,
Եւ առաջնորդք հաճոյք լիցին մեզ պըւէտք.
Ախորժելեաց տաղից նոցին, ուր ոչ ինչ
Ի տեսանել այլ՝ բայց սրտի զոչտիչ,
Զկարեն երկիւղ իւրք 'ի մեզ և վնհեր
Իմաստք նոցին բարոյականք արկանել.
Անդ այնոցիկ լիցուք պարտեաց 'ի խընդիր,
Որ ըզբնակեալքս առհասարակ ընդ երկիր,

Համբոյրս և հաչտս կացուսցեն ընդ երկին
Ընդ համօրէն մարդիկ ընդ մեզ իսկ ինքնին:
«Շուրջ ամենայն ուրեք Դիոս ըզմեզ կայ
«Տացուք նրմին ըզբնաւս որ ինչ ետ մեզ նա.
«Ի բարութիւնն անհուն լիցուք ապատան,
«Զի զմեզ սիրէ նա առաւել յոյժ քան զայն՝
«Որչափ անձամբ զանձինըս մեր սիրեմք մեք.
«Բուրմունք խընկոց մերոց իցէ՝ իսկ երբէք
«Թէ կարասցեն առնել զԷին գերագոյն
«Ի ծուխ անոսի հաչտ զանկարօտ մեծութիւն.
«Մերժէ նա զզոհ ամպարըշտին մաղթողի,
«Սիրտ սուրբ խընդրէ նա, և ուղիղ ըզհոգի.
«Արդարութիւն կանգնեալ նորին ընդ աչմէ,
«Ամենատես ակամբ 'ի մեզ նրկատէ,
«Սուր 'ի ձեռին խընդրելով զիւրքն Հարակ.
«Եւ ըզչարեաց մերոց պարզեալ ըզցուցակ.
«Այլ 'ի ձախմէ նորին 'ի ծունր իջեալ գութ,
«Առնէ զնորայն զէնընկէցիկ ըզզայրոյթ,
«Աղերսաւոր ածեալ նրմա զառաջեաւ,
«Զմերոց սրբոյից զառ 'ի չարեաց ապաչաւ:
«Թէ ստէպ վասն իմ պարտիմ մաղթել գրթու-
«Ընդէր իցէ զլանալ այլոց ինձ ըզնոյն. [թիւն,
«Ողբամ ըզհէքն՝ որ թըշնամանս ինձ նիւթէ,
«Թողեալ երկնից խընդրել զիմ վրէժ 'ի նմանէ:
«Եթէ չիցէ ինձ պարտ առել զոսոխն իմ,
«Եւ զինչ ապա առ բարերարըն պարտիմ.
«Ըզմերութիւնս իսկ բարեքեալ ըզնորուն.
«Եւ կարեկից սիրտ իմ եղեալ սիրելոյն,

« Սրբէ զհանձար առնել ընդ անբասիր.
« Ինքն իսկ առ իս ընդոյն արկեալ գուութ 'ի կիր.
« Եւ թողութեան՝ զոր ընկալաւ նա յինէն,
« Զիւրն ընձեռէ ներուումն առ իս փոխարէն։
« Սէր իմ 'ի բնաւս, յոր ակնարկեմ, ծաւալի.
« Մարդ եմ, և բնաւք են ինձ մարդիկ սիրելի։
« Զաղքատն առ իս յըղէն երկինք և զօտար,
« Եւ բաժանեն ընդ նոսա ձեռք իմ յօժար
« Ըզգոյս որ ոչ են սահմանեալ ինձ ևեթ.
« Գանձ անկապուտ այն է, զոր ոք այլուստ ետ։
« Ո՛վ բերկրութիւն գերաշխարհիկ. յոր իւրև
« Բերկրի հոգի առատաձեռն 'ի պարգև.
« Առատաձամբռն է մահացուն բարերար.
« Կարեկցութիւն և սէր առ իւրն հաւասար
« Լիցին 'ի նմա միշտ մարդկայնոյ ուղղութեան
« Բնաւից մասանց խարխաս և հիմն անսասան։
« Թէ աղմկեալ նախանձայոյզ յիս գորով,
« Տայ ընդ հարսինս ինձ ընդ հաւատ կալ 'ի խառով.
« Ոձիր գըժնեայ՝ որ զարհուրեալ միշտ գողատգ
« Հատայն ուրեք ընդ օրինաց գու ընդ սատա,
« Անգէն և անգ ընդ նախընծայ քո հրապոյր
« Ընդդէմ քոյին ամրապակէ նա զսիրտ իւր։
« Որ ըզժըպիրս տածէ խորհուրդ 'ի սրտի,
« Կըրկ շնացող հոգի 'ի սուրբ իսկ մարմնի.
« Զըբնալ 'ի ձիրս երկնից է զգաստ սրբրութիւն,
« Դից և մարդկան հաճոյ ծաղիկ պաղպաջուն,
« Զարդ պերճափայլ փըթթեալ 'ի պերճ 'ի մարմանդ,
« Ծաղիկ գողարիկ՝ զոր գոյզն ինչ շունչ խամրէ

[Ժանգ։

« Սէր խանգակաթ սերն այն ըզսիրտ իմ 'ի զուր
« Հնարի ջանայ ձըգել յոզբք 'ի հրապոյր.
« Զէ իսկ և չէ ինձ բերկրութիւնն այն օրէն,
« Եթէ ոչ զայն պատրաստեացէ ինձ Հիմէն։
« Ցուաձեմ զախտից ըզպետութիւն ընդ ինձ.
« Զիք ինչ չըքնաղ յաչս իմ յաշխարհ 'ի ստորև.
« Անփառասէր և 'ի հոգոց զերծ բնաւին,
« Գոհ 'ի տեղւոջ կամ ուր կացոյց զիս երկին.
« Աղքատ անվիշտ, և ձոխ անյար կեսամ 'ի յինչ.
« Ագահութիւն չաղմրկէ զիմ երբէք ներսէ.
« Զառնեմ զաւագն աշխատ վասն իմ սեգ ըստրուկ.
« Եւ ոչ աշխատ լինիմ նորին 'ի շնորհուկ.
« Պատիւք անոտիք և ընդունայն արուութիւնք.
« Մահկանացուք գուք յիրաւի էք մանկունք.
« Փանի՛ յօժար ըղնանրութեամբքդ պատաղ,
« Հանապազօր վարէք ըզձերքդ կենցաղ։
« Հրաժեշտ 'ի բաց ասեմ տաղտկացեալ արդարև
« Ցամենայնէ զոր տեսանեմ առ ինձ.
« Եւ փութամ կեալ. կեալ ընդ անձին կենակից.
« Խընդրեմ ըզձիւք և զչետ լինիմ վայրկենից.
« Զորս արեգակըն ճեպընթաց ինձ ծագէ
« Զիր՝ որ 'ի բաց ընդ պարգևելքն խուսէ.
« Վայրկեանք՝ զոր մեք կորուսանեմք անդադար,
« Եւ արկանին մեզ այնոքիկ 'ի համար։
« Ոչ ձրգէ զիզձս իմ վարկ մարդկան 'ի հրապոյր.
« Խուսեմ յաչաց նոցին և կեսամ թաքթաքուր։
« Անդորրաւէտ և զուարթ ըզկեանս իմ վարեմ
« Ի լրութեան ասա և 'ի մութքն նըստեմ.

«Իցէ թերևս օրս այս կենացս երեկօթ.
«Մանօթն հանուրց մեռցի անձին անծանօթ։
«Մընամ անանձնչ և աներկիւղ իսկ մահուան,
«Ոչ նահանջել կարեմ և ոչ ընարել զայն։
«Զէ իսկ և չէ ինչ ծնեալն գրժուարին
«Լեալ Կատոնի նմանօղ, երթալ զիւրովին,
«Այլ վատութիւն է զմահ անձին ըզձանալ.
«Արուոյ է գոլ գրժբաղդ կենացըն ժուժկալ։
«Կացցուք ցոր վայր կամին երկինք կալ մեզ ատա,
«Մեկնեսցուք կազմք 'ի կոչ նորին և պատրաստ։
«Երանի այնմ որ յետս յայնժամ ակնարկեալ,
«Ընդ ասպարէզ զորոյ զվերջինն առնու քայլ,
«Եւ զանցելոց ըզլաս աւուրց համայնից
«Տեսանէ սուրբքս զառաջեալս և ամբիծ.
«Քանի զմայլումն ընդ այն հոգւոյն է չքնաղ.
«Ո՛հ, նա կըրկին վայելէ յիւրըն կենցաղ»։

Ահա օրէնքն այն քաղցր և դիւր արահետ,
Ցոր կարծէի գընալ ընդ գաչս ծաղկաւէտ.
Բարբ գտանեմ համայն ուրեք և 'ի սմա
Բարոյական խիստ, և օրէնքս գրժնեայ։
Կատուլ ինձ անդր առաջնորդէ և Ոբատ,
Տիրուլ ընծայն ինձ ըզարխուր ազգէ խրատ,
Մինչ 'ի գերեան ինձ ասայ զբօանուլ 'ի գիս իւր։
Դրոշմեալ օրէնքս ինձ այսոքիկ անհամբոյր,
Ուղղեակ կենաց իմոց համայն ուրեք կան.
Եւ յՈվիդեայն իսկ աւանիկ 'ի մատեան.
Զի և 'ի գիրս անդ ինձ կարի տարփալիս,
Տաժանաւոր արկանէ լուծ Բանն 'ի յիս.

Զինչ առաւել ինձ պատուիրէ քան ընծայն,
Զոր իսկ զինեալ արկանէ լուծ ծանրագոյն
Աղարչապետարն, զորոյ դու ըզպատակեր
Այդչափ գրժնեայ և խիստ 'ի գէմս ինձ ածեր.
Ոչ ևս յերկրայս կամ ընդ անձին ընարութիւն,
Ոչ ևս այսր անդրը գեղեմ անկայուն։

Բարբ ձրգեալ 'ի լաւութեանց 'ի յորդոր,
Գնայի ըզկեա երջանկութեան տարփաւոր.
Հեզ մարդասէր և բարերար և ժուժկալ,
Վասն իմ ևեթ յորդորէի նոքաք կեալ.
Այլ ընծոսին արդ բերելով յիս, Տէր իմ
Ըզլաւութիւնս, օրինաց քոց հնազանդիմ.
Հեզ մարդասէր և բարերար և ժուժկալ
Ընդ օրինաց քոյք վասն քո կամիմ կեալ։
Մի ինչ լիցի կորուսանել ինձ այսուիկ,
Այլ մանաւանդ հնազանդութեանս ընդ այսմիկ
Ըզմեծամեծ շահիմ վարձուց առ 'ի քէն
Զառհաւատչեայ զոր խոստանաս փոխարէն։
Նա աւանիկ ըզլաւութեանց իսկ բնաւին,
Որ զիս յիւրեանցս կախարդեալ ձրգէին,
Արեալ ըզգեղ զինչ իսկ ածէր ինձ օգուտ.
Զմայլեալ, աւա՜ղ, ընդ գեղեցիկ երեւոյթ.
Զէր իսկ և չէր ինձ շահել այլ ինչ հընար,
Բայց հառաչել առ նա 'ի զուր վայրապար։

Զինչ իսկ էր մարթ, բայց բազմավրէպ մշտա-
Զև բարեբաստ ծագեալ կրօնիցն 'ի նա լոյս. [յոյզ,
Իմաստասէրն իսկ ոչ իւրոցն իմաստից
Հանգուցեալ բերէր յանձին վարս ամբիծ։

Ուղխից չարեայրն Լիկուրգոս գիմակաց,
Օրէնքսգիր անաուրբ յորդէ զայն 'ի գնաց.
Ովիդ 'ի տաղս ինչ իւր Թրուի Սենեկա,
Սենեկա ատէպ բերէ ըզբարս Ովիդեայ։
Սիրոյ՝ որ ոչ Ճանաչէ այլ ուղեցոյց
Բայց զիւրն աւիւն, մնհեան Սոլոն խակ կառոյց.
Սոլոն Սոլոն օրէնս ապա հիմ եառուր,
Ո՞ր հեշտասէր ամաչեսցէ ընդ ախտ իւր
Եթէ զովող իւր և չարեայն ընկերշակ
Զօրէնքսգրին իւր տեսանէ զօրինակ։
Խաւար յայնժամ բնաւին և լոյսն էր նոցին,
Եւ ուղղութիւնք նոցա յաՃախ պարծանք սին.
Խոտեմ ըզխաղս՝ յորոց հրաժեշտ տայ Կատոն,
Խոտեմ համայն և զարմանաց զինքն որսոն։
Մարդկեղինիս տաժանաւոր լաւութեան
Քաջ խելամուտ մարդն Թողեալ 'ի յինքեան,
Բարձրամբառ և սիրէ զինքն միայն.
Օրհասական վտանգին յայնժամ 'ի դարման
Հարկ է Թափել ըզնա 'ի բաց յինքենէ.
Այլ ո՞ զհասատոյր նըմա զհարուածն տայցէ։
Կրօնիցն գեղ կանգնէ զնովաւ յաղթանակ.
Նա զամենայն տապալէ խոչ գրժընդակ.
Ըզդերարհրաշ, հմպա, զնորին զօրութեան
Զըսքանչելիսն բեր լիցուք խոստովան։
Զկարէ երբէք սիրտ մարդկեղէն գոլ ունայն,
Սիրոյ 'ի նմա յաջորդէ սէր այլ փոխան.
Եւ ամենայն ինչ զոր 'ի բաց 'ի նմանէ
Սիրելագոյն ինչ յաջորդեալ արտաքսէ,

Այն ինչ 'ի բաց վարեալ նախորդ իւր անտի,
Ոչ ևս այն մեզ Թըւի սիրոյ արժանի։
Մարդ սիրելի յառաջագոյն էր անձին.
Եկն արարիչն, և զայս պատուէր ետ նըմին.
Սիրեա զԱստուած, սիրեա զընկերըս քոյին.
Ի սէր օրէնք իմ ամենայն պարագրին։
Նոր պատուիրան. և որ զայն մեզ ետ պատուէր,
Ըզպատուիրեալն ելոյց 'ի սիրտ մեր ըզսէր.
Ի զգալ զեռանդն զայն մարդոյ 'ի յինքեան,
Աստուածարեալ՝ զանձն խակ առեաց նոյնհետայն.
Զարմանալի մինչև ցայնժամ վարկանէր
Նա զամենայն որ ինչ 'ի յանձին կըրէր.
Այլ աւանիկ անարգ այժմիկ և խոտան
Նըմա յանձին իւրուն Թըւի ամենայն։
Խոնարհի նա, և սէր ըզնոր մարդ 'ի գոյ
Ածէ երկնեալ խոնարհութեանն 'ի ծոցոյ.
Ոչ ևս զինքըն վասն անձին սիրէ նա,
Այլ սէր անձին վասն Աստուծոյ է 'ի նմա,
Հաշտի յայնժամ ինքն ընդ ինքեան 'ի համբոյր.
Եւ այն ինչ սէր հաստատէ զկարգ ընդ հանուր,
Մեծամեծաք ըզնուն կրօնիւք տիեզերք.
Եւ զինչ սիրոյ այնուհետև գրժնեայ երկ.
Տանջանք և մահ ոչ ևս իցեն ահաւորք,
Դիմեսցեն անդր հոյլք վրկայիչ բիւրաւորք։
ԸզՃապաղիս ոչ ևս արեան կամի տեր,
Նահատակին սուրբք 'ի կենցաղ խըստամբեր.
Լընուն երամք Ճրգնաւորաց բնակաւորք
Ի յանապատս տարագիրք կամաւորք.

Որոց ամբիծ վարեալ կենցաղ հանապազ,
Եւ հանապազ հնարին անձանց պատուհաս։
Ի կուսակրօն կեաց 'ի կենցաղ ինքնանուէր,
Ոչ ևս իշխէ մարմին հոգւոյն անդ տիրել.
Այլ մաքրափայլ հոգին ազատ 'ի մարմնոյն,
Բնութեանն անլոյծ օրինագրէ լքութիւն։
Սիրակիցորդք 'ի հասարակն սիրոյ երկոքեան
Բերկրին 'ի սուրբ խաղաղութեան յորում կեան,
Ոչ թէ միայն նոցա 'նդ իրարբս կապանք
Են ցանկալիք, այլ և բնաւին սրբազանք։
Հայր աղքատաց է մեծատունն և որբոց.
Ցիրաւացի սրբամբարութեան իսկ 'ի բոց
Ո՞ վառեսցի, ուր թագաւոր մեծատատ
Ներել միմեանց օրինակաւն առնէ ազգ.
Լայ Թէոդոս յանդիմանեալ յԱմբրոսեայ,
Ապշիմ ընդ սա, ոչ ինչ ընդհատ քան ընդ նա։
Քեզ ակնարև կան արդասիքն ատանօր,
Զոր սէր ծնանի, քաջազանց մայր բեղնաւոր.
Առանց սիրոյ անոսի է տպաս պաշտամանն,
Զէ իսկ և չէ մարթ բաժանել երբէք զայն,
Զոր բովանդակ խընդրէ Աստուած իւր 'ի նուէր.
Պարտիմք սրբել նրմա տաճար ըզսիրտ մեր։
Այլ աղէ զինչ սահմանք իցեն, ասիցես,
Սիրոյն զոր նա օրինագրէ ունել մեզ։
Եթէ խընդիր դու սահմանացն առնիցես
Զայնքր սիրոյ, չիք տակաւին սէր 'ի քեզ.
Զինչ այլ իրիք իցէ երբէք ընդունակ
Սիրա եռանդեամբն այնուիկ գրաւեալ բովանդակ։

Սահմանել չափ սիրոյ է բնաւ չունել զայն,
Մի տեղծաներ եղջերուաքաղ սրբազան.
Բնութիւնն իսկ քեզ ուսուցանէ աւագիկ
Ըզյեղանակ և զչափ սիրոյն այնորիկ.
Զօրէնս 'ի բաց հա՜պա թողեալ զամենայն,
Լուիցուք զոր ինչ ասայ մեզ դաս սիրա մեր միայն։
Ոչ մեծութիւն զիս արկանէ 'ի հրապոյր,
Եւ ոչ գանձուց երբէք ծարաւ 'ի տենչ իւր.
Քեզ բոլորով ցանկամ սրբոյ Աստուած իմ,
Բոլորովին իսկ քո լինել փափաքիմ.
Աւագութիւնք ինձ ճոխութիւնք և բերկրանք
Լիցին օրէնք ևեթ քոյին և հրամանք։
Զեմ համբաւոյ ինչ և անուան 'ի խընդիր,
Այլ անծանօթ մարդկան՝ 'ի քեզ պարագիր.
Զունիմ անտես փառաց իմոց զոք վրկայ,
Քոյին ևեթ տեսանէն աչք ըզնոսա։
Դու ինձ ծագես տիւ 'ի գիշերս յայս 'ի խոր,
Եւ քև միայն գտանեմ 'ի վիշտս իմ անդորր.
Ի յանապատս խորասուզեալ 'ի յանշէն,
Ի քեզ գտանեմ ըզտիեզերս համօրէն։
Զուր ինձ աշխարհ զիւրս ընծայէ ըզբարիս.
Ոչ 'ի քոյոցդ կարասցէ մեկնել զիս։
Ոչ սիրողաց ըզքեզ օրէնք քո սպառնան,
Որ ինչ գըժնեայք նոցա ազէտք պահեալ կան.
Ըսպառնալիք, որ ոչ խռովեն երբէք զիս.
Դըժնէագոյն քան զամենայն է չարիս
Ոչքն սիրել ըզքեզ Աստուած իմ և տէր։
Թաչ 'ի ձեռին գըտցէ զիս ժամ մահաբեր.

Ակընկառոյց 'ի քեզ՝ արկեալ գիրկս ըզքև,
Զարտեւանուն իմ փակեցից 'ի յարև։
Այսպէս ահա վառեալ 'ի տենչ եռանգուն
Սիրտ ըզմայլեալ բացատրէ զիղձըս սիրոյն.
Սակայն, աւա՜ղ, օր ըստ օրէ շիջանի
Ատուածայինս այս բոց սիրոյ գեղանի.
Հազիւ աղօտ ինչ առկայծեալ տակաւին
Ներշնչք նրւաղք առ 'ի նմանէ հատանին։
Մեռանի սէր 'ի սիրտ, հաւատք 'ի հոգւոջ,
Ո՞ւր էք աւուրք չքնաղք, նորեկք 'ի բողբոջ,
Բարեբասիկ եկեղեցւոյ ժամանակ,
Դարք բարգաւաճք գեղածաղիկք 'ի հասակ։
Եւ դուք իսկ ո՞ւր հաւատացեալքդ էք նախնիք,
Մահկանացուք զարմանալեաց արժանիք.
Իցեմք իսկ մեք որդիք ձեր արդ ճշմարիտք.
Մի էր ձեզ գանձ, մի սիրտ բնաւից, միակ միտք.
Այլ ընդ նովին իսկ ընդ կրօնիւք մեք այժմիկ
Բա՜ռ զի՞ արդ գտանիմք միմեանց ատելիք.
Ատելութիւն գրժնեայ և լի արհաւրօք,
Նա մոնաւանդ մոլեգնութիւն անողոք,
Իւ կուրացեալք՝ կարծեմք պաշտօն ընծայել,
Այնմ որ ներուժն պատուիրէ մեզ և սէր։
Քանիք, Ատուած խաղաղութեան, յանուն քո
Հեղան արեանց ճապաղիք քեզ անհաճոյ.
Իցէ՞ թէ բնաւք ընդ դրօշակաւ քո գնային
Ըզտիպ յինքեանըս բերելով ըզքոյին,
Գունդ քաջազանցն առհասարակ խաչակիր,
Որ ամպարիշտ ձեռաք անխիղճք 'ի յոճիր

Յոխորտային փրկիչք սրբոց գոլ տեղեաց,
Եւ անհաւատն իսկ ընդ չարիսն հառաչեաց։
Պարսաւելի ոճիրք նոցին եղեռանց,
Այլ պանծալի է գէթ նոցայն մեզ նախանձ,
Իսկ ըզնոսա, որ բազմաղէտ ըզմարտից
Լուցին առ մեզք ըզխանձ, 'ի սպառ ատելից։
Ո՞ր խուժադուժ մեզ վարդապետք ուսուցին,
Զէն 'ի նախանձ կրօնից մերոց 'ի ձեռին,
Վարել 'ի սուրբ մոլեգնութիւն, և զփաստ մեր
Ի սիրտ յամառ խորասուզել ընդ սուսեր։
Ճեպիմ տաղիցըս ժամանել 'ի յաւարտ.
Եւ եթէ չէր մերձ 'ի նուաղել ձայն իմ արդ,
Զառածանել գայիք և զիս իսկ արդեօք
Դուք՝ որ 'ի բոց այլափառից հրաբորբոք,
Ի միոջէ երկնեալ եղբարք 'ի ծոցոյ,
Եւ համահայր որդիք միոյն Ատուծոյ,
Դրօշ հակառակ մերոյս պարզէք դրօշակի,
Երբեմն հաշտք ընդ մեզ, և արդ թշնամի։
Եւ ո՞ երբէք չարեացապարտ այդոցիկ,
Դուք իսկ ինքնին ըզքիք ըզմեզ և թողիք։
Հարք ձեր մերոցս էին եղբարք հարց, գիտէք.
Իսկ դուք ընդէ՞ր ոչ ևս եղբարք մեր իցէք.
Մի թէ 'ի սպառ ըզցանկալի զոգ սիրոյդ
Խըզել կամի մոլեգնիդ այդ ձեր զայրոյթ։
Եկա՛յք եկա՛յք 'ի գիրկս մեր դիմեցէք,
Որ տարածեալ կան ձեզ 'ի սիրտ անձկաբեկ.
Վնասապարտից հաւուց զաւակիդ թշուառ,
Որ զհետ նոցին խարդաւանեալ զառածար,

Մոլորութիւնքդ քո նոցին է ոճիր,
Ի դրօշ լքեալ 'ի նոցունց եկ դու դարձիր.
Ներեսցէ հայրն հասարակաց զամենայն,
Այն որ աղդին իսկ աւասիկ հրէական,
Տիրասպանից եղբարց մերոց երիցանց,
Առ դրժպրէին մեացորդ որդւոցն ուխտազանց,
Աստուածապէս շնորհել ներուին առ յապայ
Թըշնամանեալն 'ի նոցանէ խոստանայ:
Յուսով յանյոյսն հաւատասցուք անեղկբայ,
Զի առ Աստուած իւր վերըստին դարձցի նա.
Այո՛ 'ի գութ շարժեալ յանուն Յակոբայ,
Ցիշեսցէ զուխտ իւր զառաջին ընդ նոսա.
Զեն ըստառեալ գանձք իւր 'ի շնորհըս նոցին,
Ընձիւղէ ծառն գօսացեալ վերըստին.
Յուցան աւուրքն իսկ, յոր յանկեղծ 'ի լալխ
Զաւակն ըզմեզըս քաւեսցէ հայրենիս:
Բայց երկիցուք իսկ, զի կընքեալ է սահման
Յոր վայր յամառ սիրաք մեր անզեղջ խըստանան:
Մերձի օրհասն այն, և դու զոդ փըրկաւէտ
Դեռ ըզնուաստից ոմանց ձրգես սիրտ ըզհետ.
Այլ խիզախէ ցարդ համարձակ քեզ ընդդէմ,
Պերճացեալ յանձն ազատասիոհ միաք վըսեմ.
Երկբայի յար, պանծայ ընդ այն, և անխառով
Յեղբր շիրմին ըզխրոխտ երկբայան ածելով:
Երկիր էիցս առ հասարակ պագանէր
Դար հեթանոս, և զամենայն ինչ պաշտէր.
Մոլորութիւն արդ ծայրայեղ և անկրօն,
Ոչ ինչ խիք ընծայէ սպաս և պաշտօն:

Պարտ է բնաւից ընուել Ճըշդիւ պատգամաց,
Հարկ է կրօնից տակաւ տեղի տալ 'ի բաց,
Մինչև ահեղն հասցէ օրհաս մըշտայուշ
Ըստառնացեալ տիեզերաց կանխագոյժ.
Օր գըթութեան, նոյն և վրիժուց օր համայն,
Թըւիմ այժմէն իսկ տեսանել ահիւ զայն.
Ազգէ 'ի յունէն իմ մըռընչիւն սասակակոծ
Ալեաց ծովու, որ վերդովին յանդընդոց,
Դղերդին ատեղք նուաղեալք և շուրջ ընդ երկիր
Բոցածաւալ ընթանայ հուր վրէժխընդիր.
Եւ 'ի հընչիւն փողոց յառնեն դիակունք,
Ներսեմասատուերք ահա բացեալ նոցին տունք:
Օրն այն վերջին ծագեալ աւուրց աշխարհի,
Աստուածատատ կոչէ հրաման զաղգս երկրի
Յատեանն ահեղ, և զուսրբս ընտրեալ իւր բաժին,
Կրօնից նորա գործք անգանոր վըճարին:
Երկիր, արև, և ժամանակ կորընչին,
Յաւիտենից դրունք 'ի բանալ հանդերձին:
Բանին գըրունք. և որ անտեսն էր կանխաւ,
Գայ անդր 'ի յայտ, փառք իւր ահեղք զառաջ
Շուրջ ընդոսաւ փայլատակունք և որոտ, [ջեաւ,
Փայլակնացայտ կանգնեալ գահոյք իւր ընդ օդ.
Համապարփակն անդ ամպոսի վարագոյր,
Եւ 'ի տեսիլ ածէ Աստուած ըզատատ իւր.
Եղուկ այնմիկ՝ որ անծանօթ յառաջմէ,
Անդ ճանաչել ըզնա ըսկիզբն առնիցէ:
Զայնք հրեշտակաց նորա հընչեն ընդ երկիր,
Եւ 'ի փոշւոյ լեալ միւսանգամ կենդանիր

Մահկանացուաց ազգ սատանեալ արհաւրօք,
Անապաւէն անապատան և անոք,
Ոչ ևս ուրեք ինչ տեսանէ մեծութիւն,
Բայց զահագին գատողական սթոռոյն։
Ի գերարփին շլացեալ լուսոյն 'ի փառաց,
Թոյլս ամպարիշտն ահիւ խընդրէ տալ 'ի բաց.
Այլ անագան, զի զնա ընկենն փառքն արհի։
Եւ 'ի յանել կործան 'ի վիհն անկանի,
Ի ձոր վայոց և բազմահեծ արտասուաց.
Եւ որպիսի՞ ինչ անգ խուժան տանջանաց
Ի սոսկալին յայն ազէտից օթևան
Զեզուցու զքև ո՛ քրիստոնեայդ անհաւան,
Ո՛վ խրատասիրա և ապաշնորհ ազգ անկրօն,
Ուր և Տիտոս իսկ և Սոկրատ և Կատոն,
Ոչ ինչ իւրեանցն օգնեալ նոցա լաւութիւն,
Աւաղ, զի ոչ գիտացին զէն գերարուն,
Անկցին 'ի վիհն յաւերժական գահավէժ.
Ուր յինքնագատան 'ի զուր պանծայ Բոնան 'ի վրէժ,
Ուր և արժգոյն ծիւրեալ Բրակմանն 'ի Ճրգունս,
Անուս 'ի միա՝ զի չարար այլ ինչ արգիլնս
Դրժոխահեռ անդրթուութեամբն ընդ ինքեան,
Բայց վաղվաղել ըզպատուհան անվախճան։
Ընդ կործանումն իւր ոսատանեալ անգանօր
Հագարացին ըստրրջանայ զրջաւոր,
Ի գեղանուոյն անկեալ 'ի բաց 'ի դրախտէն,
Զոր խոստացաւ նրմա իւրեանց մարգարէն.
Ապաժամանն 'ի փափկութեանքն վայել,
Որում մոլար դէտակն ազանդ իւր ունէր,

Ոչ ինչ գտանէ՝ յամենայնէ կողոպուտ,
Բայց արհաւիրս և մոլեգին անդ զայրոյթ։
Միայն ըստոյգն յայնժամ ցընծայ քրիստոնեայն,
Տեսանելով զիւրև զարմանքս միայն.
Տեսանէ անդ փայլակնացայտ 'ի բեմին,
Բազմեալ զԱստուած՝ յոր հաւատացն անդրնին,
Ցոր յուսացաւն, և որում էր տարփաւոր։
Այլ դադարեն հաւատք և յոյս անդանօր.
Անդ սէր միայն կացցէ մեռացէ յաւիտեան։
Սէր երկոցունցն իսկ հատուցումն անվախճան։
Կեցցեն արդեաք, ո՛վ սուրբ կրօնք, տագնապիմ
Քեզ նրւիրեալք մինչ 'ի յետին յայն օրհաս։ [այս
Որ զքոց փառաց երգէ Մուսայ ըշխանգէս,
Կեցցէ ընդ քեզ ցորչափ դու ինքն կեցցես.
Փառք իւր,... այլ զինչ բարբառիմ յո՞ մոլորիմ.
Իզձք պարծանաց մրացեն երբէք 'ի սիրտ իմ,
Ի սիրտ՝ որ քեզ է միայնոյ նուիրական։
Լէր դու ըզձից իմոց ուղղակ և թարգման.
Եւ մի՞ այլ ինչ, այլ փառք քոյին միայնակ
Փուտ քերթողիդ լիցի յաւերժ երգ 'ի նուագ։

ԿԱՌՍԱՐԼՆՑՆ ՎԵՑՆԵՔԻՆ ԳԻՐՔ

ՌԱՍԻՆԻ Ի ԿՐՕՆՍ

ՑԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ

ՏԵՍՈՒ ՍՏԵՓԱՆՈՍԻ

ԵՒ

ԵՂԲՕՐ ՆՈՐԱ

ՊԱՐՈՆ ՊԱՂՏԱՍԱՐՈՅ

ՆԵՓԻՍԵԱՆՑ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ՅԵՐԳՆ Ա.

Իջ 10. Ակնարկէ 'ի բան Հր սաղմոսին. « Բայց զի իմ փոքր մի և սասանեալ էին ոտք, սակաւիկ մի և գայթակղեալ էին գնացք։ »

10. Արքայս այս է Լուգովիկոս ԺԷ, առ որով սկիզբն եղև անկրօնիցն ապստամբութեան 'ի Գալլիա։

11. Արքայորդեակ իմա զԼուգովիկոս ԺԶ, զոր ապա ապանին ապստամբքն։

23. Այս ինքն յԱլպեան լերանց, յորոց բղխեն գետքն Պադոս կամ Եւրիդանոս, Հոդանոս և Հենեոս. և մանաւանդ սոքա երկոքին յետինքս անգստին 'ի մթոքէ լեռնէ առնուն բղխումն։ Իսկ փերրարա քաղաք է առ Պադոս գետով։

25. Մենենտիոս էր արքայ տիւրենացւոց, այր անգութ եւ ամպարիշտ, որ հալածեցաւ 'ի ժողովրդենէ իւրմէ, և ապանաւ յինեւասայ ըստ Վիրգիլիոսի։ Սալմն և Կապանէ ամպահարեալ կորեան վասն ամպարշտութեան իւրեանց։

25. Եպիկուր որպիսի ինչ որ էր՝ այն յայտ է ամենեցուն։ Դիոկլի գնա տեսեալ 'ի մեհենի, գոչեաց. Ոչ երբէք այնպէս ինձ վնաս թուեցաւ Դիոս, որպէս 'ի տեսանել առ ոսս նորա անկեալ զԵպիկուր։

28. Դամոկլէս չոգոմարար Դիոնիսեայ բռնաւորի, որ զբարեկենդանութիւն նորին երանէր, փոխեաց զբարբառիւր՝ իբրև հրաւիրեալ 'ի նմանէ 'ի ճաշ, և բազմեալ ընդ նմա 'ի պերճ գահոյս, տեսանէր զդագաղաթամբն սուսեր առկախեալ։

29. Լուկրետեայ տիկնոջ հռոմայեցւոյ բռնաբարու-

թիւնն 'ի Սնքաստոսէ արքայորդւոյ, յանդրանկէն Տարկուինեայ Գոռոզի, եւ հալածել 'ի Հռովմայ զթագաւորս մինչ չև իսկ օրինաց ընդդէմ շնութեան հաստատեալ առ այնոսիկ՝ որք պարծէին լինել որդիք Արիսի և Աստղկան։

29. Թէպէտ չև եւս սահմանեալ էին օրէնք 'ի Հռովմ, սակայն զՏարկուինեայ անգթութիւնն և զՄեսոիոսի զօրավարին ալբայեցւոց մատնութիւն դատապարտեցին օրէնք յաւիտենականք անյեղլիք, որ յառաջ իսկ են քան զամենայն մարդկային օրէնս։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ՑԵՐԳՆ Բ.

33. Եպիրնէս Ճարտարախօս Ցոյն ասէնացի, ծնեալ 397 ամաւք նախ քան զթուականութիւն փրկչին, երիցագոյն քան զԴեմոսթենէս 16 ամաւք, և ոսոխ նորին։ Լիսիբլագոյն 'ի Ճառս նորա է այն, զոր ասէնաբանեաց առ 'ի խափանել զամենացիս 'ի պատկերս զԴեմոսթենէս, թէպէտ և ոչ յաջողեաց նմա։

33. Դիոգէն դշխոյին տիւրացւոց անձնասպանութիւնն երգեալ 'ի Վիրգիլեայ յայտնի է ամենեցուն։

34. Ակնարկէ 'ի կախարդութիւնսն ստեղծաբանեալս 'ի Թասսոյէ 'ի Կորուստ դրախտին։ Իսկ կարգեսեան յորձանքն և կարծիք զգրից տիեզերացս և զգուռոց յայտնի են, զորս Նեւտոն գիւտիւ ձգողութեանն և հատուածակողմն ապակւոյ եղն։

36. Ակնարկէ 'ի փոփ իմաստասէր անգղիացի, որ ուղղոյց զի ամենայն որ ինչ է յաշխարհի՝ բարւոք է, և յընդհանրական կարգի տիեզերաց՝ մարդ 'ի պատշաճ յիւրումն պայմանին կայ։ Ջնոյն և Սենեկա ասէր, մարդկային պայմանի անընդունակ գոլ մեծագոյն ևս բարեաց։

39. Վարժապետին Լուկրետեայ, այս ինքն Եպիկուրոսի։

50. Այսինքն Աստղկան, զոր Լուկրետիոս 'ի նախերգանս տպագրեցն կարդայ յօգնութիւն, և կոչէ զնա հնչուութիւն դից և մարդկան։

42. Տարրախոյզքն Ալքիմիականք, որք կարծէին բաղադրել զոսկի 'ի մեռան փիլիսոփայական քարի, համարէին գտակ արուեստին իւրեանց զՀերմէս։ Եղիներուաքաղ և արուեստ նոցա, և հնարագէտ նորին։

44. Փանգի կարի սուղ եղեն կնանք մեծի առնս։

44. Ակնարկէ 'ի հայր իւր յերէցն Ռասին, զոր չիշխէ անուանել։

47. Վիրգիլեայ են տողքս. Ենէական Զ. 899։

47. Փանգի Սոկրատ 'ի մեռանելն իւրում պատուէր եւ կրիտոնի, որ էր մի յաշակերտաց նորա, զոհել Ասկլեպեայ Ագաղաղ մի։

48. Ակնարկէ 'ի հրաշակերտ նկար Ռափայելի՝ որ կոչի Դպրոց աթենական։

48. Երակլիտոս մականուանեալն լալական, ողբայր հանապազ զնանրութիւն մարդկան. իսկ Դեմոկրիտոս ծաղրեր զայն։ Երկոցունց եւս էին իրաւունք, այլ երկոքին եւս յիմարք էին և ծայրայեղ զառածեալք։

48. Փանգի Դեմոկրիտ առանձնացեալ 'ի շիրմն ուրեք յԱբդերա առ 'ի խորհել, համարեր յանհայտից ընդ մեռեանս հանդիպմանէ ստեղծեալ զաշխարհ, եւ և զազատութիւն մարդկան։ Այս կարծիք, յոր և Եպիկուր և Լուկրետիոս անկան, անարգանս մեծ գործէ մարդկային մտաց։

49. Փանգի արդերացիք երկուցեալ թէ ցնորիցի Դեմոկրատ, յղեցին առ նա զԻպոկրատ բժշկել զխելամտութիւն նորա։

49. Ցնորք իմաստասիրաց հետազօտէին անդագար զպատճառս էից. թալէս զջուր համարեցաւ, Անաքսիմեն զօդս, և Երակլիտ զհուր։

49. Պիւռհոն 'ի մրրկի ուրեք ցուցանէր ուղեկցացն իւրոց 'ի նաւի զխոզ՝ որ ճարակէր անխռով, առ 'ի քաջալերել զնոսա օրինակաւ նորին։ Իմաստասէրս այս, որ երկրպագէր զամենայնէ, եկաց ազանդապետ պիւռհոնականաց։

50. Դիոգինէս շնականաց ազանդոյն երկրորդ ազան-

դապետ, թէպէտ և հանճարեղ 'ի խրատել զյուսութիւնս մարդկան, այլ չար եւս քան զնոսա սխտանայր ինքն զյուսութիւն ամբարտաւանութեան՝ որով արհամարհէրն զամենայն մարդիկ։

50. Անաքսագոր հարցեալ թէ առ ինչ եղև մարդ, պատասխանեաց. Առ 'ի զննել զաստեղս և զլուսին։

50. Հակառակ եպիկուրեանցն հելլասիրաց Զենոն աղանդապետ ստոյիկեանց ուժգոյն զդէմս իւր հնարաւորէր մեռելատիպ ըստ դիցն պատգամաց։ Ստոյիկեանք ըստ իւրեանցն ամբարհաւաճ իմաստասիրութեան համարէին անասանելի 'ի չարեաց զայր իմաստուն. մի 'ի նոցանէ 'ի դառնակակիծ ցաւս ոտնառութեան գոչէր. Զուր ջանայք ո՛վ ցաւք, ոչ խոստովանեցայց թէ իցէք չար։

51. Արիստոտէլ աշակերտ Պլատոնի հակառակ վարդապետին իւրոյ եկաց աղանդապետ, և 'ի Լիկէոն ճեմելով դաս ասէր, որ և Աղեքսանդրի մեծին վարժապետեաց։

51. Ակնարկէ 'ի Պիւթագոր, որ առակաբ զվարդապետութիւն իւր քօղարկէր, որ և պահս և լռութիւն աշակերտացն իւրոց պատուիրեաց։ Մարմնափոխութեանն նորա աղանդ յայտ իսկ է ամենեցուն։

51. Այս ինքն է Պլատոն որդի Արիստոնի, որ միայն 'ի միտ էառ զդժուարութիւն խնդրոյս՝ զոր առանց ասուածային յայտնութեան ոչ է մարթ լուծանել։

54. Փանդի նկարի Մոնթայն ակնկառոյց 'ի կշիռ կախեալ ընդ օդս, հանդերձ արձանագրաւ. Զի գիտեմ։

54. Պայիլ մատենագիր գաղղիացի. յորոյ 'ի մատեանս բազում ինչ ցնորական և անկրօն բանք են։

54. Ակնարկէ 'ի Սպինոսա ամպարիշտ մատենագիր. որ Հրեայ գոլով եղև ապա կալուածական, և եկաց աղանդապետ անաստուածութեան յեսմենեւտասաներորդ դարու։ Վարդապետութիւն նորա շփոթի ինն և անիմանալի է։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ՑԵՐԳՆ Գ.

57. Աւանդեն՝ զի հատս յունական իւրում կրէր աղանդապետս, և վարժեալ էր զաղանի՝ գալ առնուլ զայն յունականէն, առ 'ի կարծեցուցանել՝ թէ երկնառաք ածէր պատգամս։

58. Փանգի զօրութիւն պատուական արեանն Քրիստոսի փրկեաց և զարդարս՝ որ յԱդամայ մինչև ցնոր օրէնս կացին, և ստուերակերպ պատարագացն իսկ մատուցմանք՝ օրինակք էին ճշմարիտ պատարագին Քրիստոսի։

58. Փանգի յառաջին ժամանակս երկարակեացք էին մարդիկ, և յաւուրս Մովսէսի նոր էին տակաւին աւանդութիւնքն. զի մարթէր առ նովաւ կենդանի գոլ ականատես ոք Յովսեփայ, որոյ հայրն ականատես լեալ էր Սեմայ։

58. Այքանչելի ինն են հնարք Հրէից առ 'ի պահել անեղծ զկտակարանն յամենայն սխալանաց և 'ի յաւելուածոյ, որոց մարթէր 'ի տգիտութենէ կամ 'ի շարութենէ օրինակողաց սպրդել. զի և զնշանակս ձայնաւոր տառից ըստ նախնի ընթերցուածոյ յաւելին 'ի վերայ բառից, և զբառս անգամ և զտառս գրոց իւրաքանչիւր թուեցին.

62. Հանճարեղագոյնն 'ի ռաբբիս Հրէից Մովսես, որդի Մայմնի, յաւել զանէնս զայս ընդ երեքտասան գլուխս վարդապետութեան հրէական օրինաց։

65. Բաւական 'ի խօսելն զսկզբնական մեղայ՝ ասէ. Ոչ այնպէս դժուարահաս է մարդոյ խորհուրդս այս, որպէս առանց խորհրդոյս այսորիկ մարդն ինքնին է դժուարահաս։

66. Հաւէտ մայր Դիոսի և կին Կրոմենայ, առ որով ասկեղէն դարն ստեղծական 'ի քերթողաց, յորժամ մարդիկ շատանային ըերովք երկրի, և չեն ևս անիրաւութիւն, զեղխութիւնք և պատերազմանք տիրեալ էին ընդ երկիր։

69. Ոսիրիս ըստ հասարակաց կարծեաց եգիտ յԵգիպտոս արուեստս բազումս, որով և յետ մահուն աստուածական ընկալաւ պաշտօն։

70. Անորիս որդի Ոսիրեայ և Իսեայ, կամ պահապան նոցին, վասն որոյ և շանագլուխ նկարի 'ի ցոյց հաւատարիմ պահպանութեանն։

70. Ընդ անուամբս Ամմոն, որ ստուգաբանի աւազային, պաշտեր Արամազդ 'ի Լիբիա։

70. Մոգոք պաշտեցեալ առ ամմոնացիս, որում զոհէին նոքա զորդիս իւրեանց։

70. Փամվա պաշտեցեալ առ մովաբացիս իբր պաշտպան հեշտութեանց, որում Սոլոմոն կանգնեաց մեհեան՝ հրապուրեալ 'ի կանանց։

70. Տօն հռչակաւոր 'ի Տիւրոս և 'ի Սիդոն, յորում լային անդադար զԱդոնիս կամ զԹամուզ։ Կռապաշտութիւն անց յեգիպտոսէ առ փիւնիկեցիս, 'ի փիւնիկեցւոց առ ցոյնս, և 'ի ցունաց առ ամենայն ազգս։

70. Ցաւազուստս Աֆրիկեայ, ուր էր մեհեան Ամմոնի Արամազդայ։

70. Կաղնիք 'ի Դոդոնէ հռչակաւորք, եւ աղաւնիք յանտառի անդ բնակաւորք, ըստ առասպելաց, գուշակէին զհանդերձեալս։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ՅԵՐԳՆ Դ·

80. Յանաձեար քերթող խոալացի 'ի սրբազան երգս ծննդեան փրկչին անճաշակ իմն խառնէ առասպելս։

81. Եգիպտուհին Կլէոպատրա մերաբանեալ ընդ Անտոնիոսի 'ի պատերազմին Ակտիոնի, գուսանեալ ընդ իւրեանս զամենայն զօրութիւնս արևելից։

82. Գուշակութիւնք Սիբիլլայից՝ զորս Վիրգիլիոս 'ի հովուականն իւր յարէ յԱւգոստոս. Յովսեպոս և Տակիտոս յարմարեն 'ի Վեսպասիանոս։

84. Նորին իսկ Յովսեպոսի երբայեցւոյ է բանս։

89. Հրեշտակութիւն նոցա հռչակաւոր առ կալիգուլա լիցի առհաւատչեայ լանիցս. զի իշխեցին ընդդէմ ահարկու իշխանին հրամանացն կալ, որ կամէր զպատկեր իւր 'ի տաճարին նոցա կանգնել։ Ազգն այն յօժար երբեմն 'ի կռապաշտութիւն, նախանձաւոր էր յայնժամ որպէս և ցարդ իսկ հայրենաւանդ օրինացն։

91. Լիսն քաղաք Գալլիոյ, ուր սուրբքն Պոթինոս և Երանոս յաջորդք աշակերտաց առաքելոցն Քրիստոսի հիմնեցին եկեղեցի. և ուր 'ի բազմութենէ վկայիցն դիականց լցան հրապարակք, և ներկան գետքն երկոքին յարիւն։

93. Պերեգրին իմաստասէր շնական, որ յառաջն էր քրիստոնեայ, և ապա յոլիմպիական խաղս առ անափառ պարծանաց կամակար այրեցաւ։ Նոյնպէս և Կալանոս իմաստասէր Բրակման յաւուրս Աղեքսանդրի արկ զանձն 'ի հուր.

97. Տերտուլիանոս երկիցս ուրեք ընդդէմ հեթանոսաց զգիր Մարկոսի Աւրելեայ ածէ առհաւատչեայ հրաշիցս, զոր կլաւդիանոս ընծայեր կախարդութեան։

99. Աւարիկոս արքայն Գոթաց ասպատակեաց 'ի Հռովմ յամին 410։ Ատտիլաս արքայ Հոնաց, որ հարուածն աստուծոյ կոչեցաւ, յաւեր դարձոյց զքաղաքս Իտալիոյ յամին 452. որ և 'ի Հռովմ արշաւէր, այլ աղօթիւ սրբոյն Լեւոնի քահանայապետին ընկրկեցին զնա։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ՅԵՐԳՆ Ե·

107. Քանզի Գալիլէոս յաւուրս Մեսիէնաց կացեալ, յանուն նոցա զարբանեակս լուսնթագի կոչեաց. եւ Քաւինի աստեղագէտն առ Լուդովիկոսիս ԺԴ զարբանեակս երեւակի գտեալ, յանուն նորա զայնոսիկ յորջորջեաց։

107. Ոմն 'ի պատմագրաց Համարի նանրաբանաւոր կարծեօք զԼուդովիկոս ԺԴ կոչեցեալ արդար, այնու զի ընդ կշիռ աստեղատամբն ծնաւ։

107. « Թէպէտ կըշիռ եւ թէ կարիճ յէս գիտէ ». ասէ

Որատիոս. եւ զինչ խոսիր ընդ երկոսին մերձաւոր աստեղատուն կայցէ բաց յանուանցն։ Զէր իսկ մարմի մշակացն եգիպտացւոց գուշակել զհետեւանս անուանցն, զորս ըստ հաճոյս եդին։

107. Փարատան բժիշկ եւ աստեղագէտ անուանի, որ ամպարշտեցաւ հմայել զախտարս փրկչին մերոյ։ Եւ զանդրանկին իսկ իւրոյ գուշակեալ էր նորա զերկայն եւ զպանծալի կեանս. այլ նա յերեսնամանի գլխատեցաւ 'ի Մեդիոլան, վասն դեղամահ զկին իւր առնելոյ։

108. Մորէն աստեղագէտ՝ որ յաճախէրն 'ի դրունս երկոցուն իշխանացս, եւ որում Մազարէն հասս իսկ կարգեալ էր։

108. Ակնարկէ 'ի նանրահաւատ կարծիս նախնեաց զնուաղմանէ լուսաւորաց, եւ զերեւմանէ գիսաւոր աստեղաց, եւ զրբոյ ճչելոյ, այլովքն հանգերձ՝ զորս 'ի ստորեւ յիշատակէ։

109. Լուկրետիոյ աշակերտին Էպիկուրայ բնաբանութիւն լի է ծայր 'ի ծայր անհեթեթի մոլորութեամբք։

109. Վիրգիլիոս զիշխել եւեթ համարի գործ հառմայեցւոց, զնարատարխաւութիւն իսկ այլոց թողեալ ազանց։

110. Ի կրկնապատիկ նեցուկ, այսինքն յինքնակալութիւն արեւելից եւ արեւմտից։

111. Ակնարկէ յԱրիստոտել, որոյ բազում ինչ բանք անիմանալիք են եւ մթինք, վասն ոչ անեղծ հասանելոյ առ մեզ մատենագրութեանց նորա։

111. Գենուացին Կոլոմբոս, որ եգիտ զԱմերիկա։

111. Փանզի գիւտի մագնիսին զհետ եկն առուն Պերովայ 'ի սպանիացւոց, ուր 'ի վեց դարուց հետէ իշխէին Ինգայք։

112. Ակնոցագործի ուրուն համբակք 'ի Զելանդա 'ի սկիզբն եօթնեւտասներորդի դարուն եղեն ըստ դիպաց պատճառաց հրաշալի գիւտին Գալիլէոսի աստղաբաշխականաց։

112. Մոլորական 'ի սկզբան անդ թուեցան կարծիք Գալիլեայ զհոլովմանէ երկրիս, մինչեւ յատեան անգր սրբաքննութեան մատանել նմա։

113. Բնաքննիչք եւ մանաւանդ Ռիւմիւր 'ի ձեռն մանրացոյց գործոյ գտին զքանչելիս անհամար, զորս ոչ զօրէին աչք տեսանել։

113. Յոտագիրացին Արիստոտել, որ ընդ երկայն ժամանակ տիրեաց 'ի վարժարանս, որ եւ մի յօրինաց բնաքննութեան ուսուցանէր՝ բնութեանն ատել զդատարկութիւն։

114. Կարդեսիոս գերահռչակ իմաստասէր գալլիացի ծնեալ յամին 1596. եբաց զճանապարհ գիտութեանց եւ արուեստից՝ զոր անքննութիւն ճեմական իմաստասիրութեան խափանեալ էր. եւ երարձ զկանխակալ մտահաճոյ կարծիս թիւրս, մանաւանդ 'ի բնաքննական եւ 'ի շափական մակացութիւնս։

114. Ինքն իսկ Կարդեսիոս որպէս կարծիս ինչ 'ի ներքս ածէ զայս գրութիւն, որ չէ ընդունելի առ բնաքննիս։

115. Ղեւատն իմաստասէր եւ շափարան անգղիացի մեծահամբաւ, ծնեալ յամին 1642. որ ուսոյց զորէնս ձգողութեան համագոյից ընդ միմեանս, եւ զտեսաբանութիւն ած 'ի զարգացումն մեծ։

118. Ալֆոնսոս ժ- արքայ սպանիացւոց ժպրհէր ասել, զի եթէ խորհուրդ 'ի նմանէ հարցեալ էր արարիչն 'ի ստեղծանել զաշխարհ՝ լաւագոյն զայն յօրինէր։ Փանիք յիմաստասիրաց հանգոյն թագաւորիս գտանին։

122. Տալապք են քուրմք սիամացւոց, եւ գիք նոցա Սոմնկոտ, որ թերատատոյ եղբօր իւրում յաշխեալ մեծաւ պատերազմաւ, արութեամբքն իւրովք զաստուածական պաշտօն ժառանգեաց։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ՅԵՐԳՆ Զ·

128. Ակնարկէ յԵրբման յանուանին՝ որ հանճարոյն հեշտասիրութեամբ, եւ Պետրանիոսն իւրոյ դարուն առնուանեցաւ. որ 'ի ճառս իւր յաղագս բերկրանաց՝ պարծի չճանաչել բնաւ զանձն իւր։

128. Պետրոնիոս բդեաշխ Հռոմայեցի, մաերիմ Ներոնի, հաշակաւոր գեղխ եւ շուայտ վարուքն։

131. Զակերտանիշ տողքս առհասարակ 'ի հեթանոս քերթողաց 'ի կիր առեալ են։

136. Խաղք դիցն Փլորայ կատարէին հանդերձ լկտութեամբք. եւ կատան՝ որ առ ընթեր կայր խաղուցն, տեսանելով զի ժողովուրդն ակնածէր 'ի նմանէ եւ չիշխէր խնդրել 'ի խաղալկաց զսովորական լպիրշ համարձակութիւնսն, խոյս եւ առ 'ի տալ նոցա տեղի համարձակութեան։ Այնչափ եպերելի է առընթերակայութիւն նորա, որչափ խոյս տալն անտի առ անապարծութեան։

140. Ակնարկէ 'ի հերձուածս ազգայինս իւրոյ ժամանակին։

144. Բանաք՝ որ են քուրմք յարոնացւոց, եւ Բրակմանք՝ ազանդ 'ի Հնդիկս, բազում շարաչար ճգնութիւնս յանձին բերեն վասն փառասիրութեան եւ արծաթասիրութեան։

2394

2013